Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 9-ի N 1951- Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. Ներածություն ---------- 4

1. Ռազմավարության կապն այլ փաստաթղթերի հետ ---------- 6
2. Ռազմավարության հիմնարար սկզբունքները ---------- 7

Բաժին 2. Առկա իրավիճակը և նախանշվող բարեփոխումների շրջանակը

1. Մշակութային ժառանգության և ստեղծարար ոլորտների համակարգի ընդհանուր նկարագիրը ---------- 8
2. Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական մակարդակներում մակրոմիջավայրի ընդհանուր վերլուծություն ---------- 10

Բաժին 3. Զարգացման ուղղությունները

1. Մշակութային ժառանգության պահպանություն և փոխանցում ---------- 12
2. Մշակութային և ստեղծարար ոլորտների արդիականացում և նորարարություն ---------- 14
3. Մշակույթի հասանելիություն և ներառականություն ---------- 19
4. Միջազգային համագործակցություն ---------- 22

Բաժին 4. Ռազմավարության տեսլականը, գերակայություններն ու նպատակները

1. Տեսլական և գերակայություններ ---------- 23
2. Նպատակներ ---------- 24

Բաժին 5. Ծրագրային ուղղությունները

1. Մշակութային ժառանգություն ---------- 31
2. Մշակութային և ստեղծարար ոլորտներ ---------- 47

Բաժին 6. Ռազմավարության ներդրման և կիրարկման քայլերը, իրականացնողների պատասխանատվության շրջանակները ---------- 62

Բաժին 7. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի իրականացման ռիսկերը ---------- 63

Բաժին 8. Գնահատման պլան ---------- 64

Բաժին 9. Հապավումների ուղեցույց ---------- 68

Բաժին 10. Աղբյուրներ ---------- 69

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանում է առկա մարտահրավերներին արձագանքող և Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից և ստանձնած միջազգային պարտավորություններից բխող՝ ոլորտի զարգացման գերակայությունները և վերջիններիս հասնելու արդյունավետ ճանապարհը:

2. Ռազմավարության մշակման անհրաժեշտությունը բխում է ոլորտի առջև ծառացած խնդիրներին համալիր լուծում տալու, մեկնարկած բարեփոխումները համակարգելու հրամայականից:

3. Ռազմավարության համար արժեքաբանական առումով հիմնաքարային են մշակութային ժառանգության պահպանության, հասարակության և անհատի՝ մշակութային կյանքին մասնակցության և ստեղծագործական ազատության իրավունքի ապահովումը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությունը, որով սահմանվում են իրավական երաշխիքները:

4. Ռազմավարության հիմքում ընկած է ազգային ինքնության և արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, ազգային և համամարդկային արժեքների հետ զուգորդումը և հաղորդակցումը, համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի և արվեստի հասանելիությունը, ստեղծարարության, փորձարարական ու նորարարական ձևերի խրախուսումը, մշակույթի տնտեսականացումը, կառավարման ժամանակակից համակարգերի ներդնումն ու կարողությունների զարգացումը, մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդնումը, պետություն-մասնավոր համագործակցության փոխշահավետ մեխանիզմների խթանումը, ժողովրդավարական արժեքների գերակայության ամրապնդումը, աշխարհի մշակութային քարտեզում հայկական մշակույթի դիրքավորումը:

5. Ռազմավարության կարևորագույն ուղերձներն են՝

ա. Մշակույթը ազգային ինքնության կայացման և համընդհանուր արժեքային հենքով միջազգային համակեցության պայման է.

բ. Մշակույթը ազգային անվտանգության ապահովման գրավականն է.

գ. Մշակույթը հայապահպանության երաշխավորն է Սփյուռքում.

դ. Մշակույթը արժեքահեն քաղաքացու կրթության և դաստիարակության գրավականն է, մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայմանը.

ե. Մշակույթը ազատ և երջանիկ քաղաքացու ձևավորման պայման է.

զ. Մշակույթը անձի ստեղծագործական ազատության, ոգեղենության արտահայտման և ինքնադրսևորման միջոց է.

է. Մշակույթը հանրային համերաշխության և բարեկեցիկ հասարակության ձևավորման երաշխիք է,

ը. Մշակույթը միջազգային համագործակցության ընդլայնման գործոն է:

6. Սույն ռազմավարությունը կառուցված է մշակութային ժառանգության և ժամանակակից արվեստի բնագավառների համընդգրկուն վերլուծություններին ուղղված գործիքակազմի և մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի դիտարկման և օգտագործման համար անհրաժեշտ միջոցառումների առաջարկների հենքի վրա:

7. Ռազմավարությունն ամրագրում է ոլորտի զարգացման տեսլականը ու նպատակները, ինչպես նաև նախանշում է բարեփոխումներից ակնկալվող արդյունքները և ազդեցությունը անհատի և հասարակության վրա:

8. Ռազմավարության մշակման գործընթացը եղել է առավելագույնս մասնակցային՝ ընդգրկելով մասնագիտական հանրության և միջազգային կազմակերպությունների առաջարկները: Միաժամանակ, փաստաթղթով ամրագրվում է դրա վերանայման ճկուն համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռելու արձագանքել հարափոփոխ մարտահրավերներին և ունենալ բավարար ճկունություն ճգնաժամային իրավիճակներում: Ավելին՝ իբրև առանցքային խնդիր է դիտարկվում հանրային լայն հաղորդակցումը՝ միտված մասնակցության ու հաշվետվողականության սկզբունքների պահպանմանը:

9. Ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը մշակվել են ի կատարումն 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1902-Լ որոշման Հավելված 1-ի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 1-ին կետի 1.2 ենթակետի:

10. Առաջիկա 5 տարիներին Ռազմավարությունն ուղենիշային է լինելու ոլորտում մշակվող և առնչվող ռազմավարական այլ փաստաթղթերի ու քաղաքականությունների համար:

1. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

11. Ռազմավարությունը առաջիկա 5 տարվա համար նախանշում է Հայաստանի Հանրապետությունում մշակույթի ոլորտի բարեփոխումները, հետևաբար վերջինիս հայեցակարգային շրջանակն ուղղակիորեն պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններով և ստանձնած միջազգային պարտավորություններով, տեղական ու միջազգային գործընկերների հետ համագործակցության համաձայնագրերով, փոխըմբռնման հուշագրերով, ինչպես նաև հաշվի է առնում ոլորտում ընթացիկ համակարգային բարեփոխումներն ու առկա տեղական և միջազգային փորձն ու գիտելիքը:

12. **Հայաստանի Հանրապետության 2050 վերափոխման ռազմավարություն.** Ռազմավարությունը հայկական մշակույթը սահմանում է որպես ազգային արժեք և միջոց՝ ամուր ինքնության և համահայկական ներուժի համախմբման նպատակների իրագործման համար: Սույն Ռազմավարության նպատակների իրականացումը նպաստելու է նաև Վերափոխման Ռազմավարության 1-ին և 16-րդ մեգանպատակներին, քանի որ *ապահովելու է գիտելիքի, մշակույթի, գիտակցության և հմտությունների զարգացման միջոցով քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորումը, ինչպես նաև ճանաչված, հարգված և հյուրընկալ Հայաստանի ստեղծումը և հայկական մշակույթի հանրահռչակումը:*

13. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրում սահմանվում է, որ մշակույթի ոլորտում քաղաքականությունը միտված է լինելու **հայկական մշակույթի և ժամանակակից արվեստների զարգացմանը և տարածմանը, մարդկանց հոգևոր պահանջմունքների բավարարմանը, ստեղծարար, տաղանդավոր անհատ արվեստագետների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, պատմամշակութային միջավայրի պահպանությանն ու ճանաչելիության բարձրացմանը:**

14. **Կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ).** Սույն Ռազմավարությունը նպաստելու է Հայաստանի Հանրապետության հանձնառությանը՝ հասնելու ՄԱԿ 2030 սահմանված կայուն զարգացման նպատակներին: Այս առաջընթացը չափելի դարձնելու համար Ռազմավարության նպատակների արդյունքային շղթան և հատկապես մշակված չափորոշիչները էապես պայմանավորված են ԿԶՆ-երով և միջազգայնորեն կիրառվող թիրախներով: Մասնավորապես՝ սույն Ռազմավարության հաջող իրականացումը խթանելու է 1, 3, 4, 5, 8, 10, 11, 13, 16 և 17-րդ ԿԶՆ-երը, մասնավորապես շեշտադրելով 11.4 ենթանպատակը՝ ուժեղացնել աշխարհի մշակութային և բնական ժառանգության պահպանությանն ու երաշխավորմանն ուղղված ջանքերը, ինչպես նաև 4.7 ենթանպատակը՝ խթանել մշակույթի դերը խաղաղության հաստատման գործընթացներում և բռնության դեմ պայքարում, մշակութային բազմազանության կարևորությունը և մշակույթի ներդրումը կայուն զարգացման գործում:

15. Ռազմավարության հայեցակարգային շրջանակը համահունչ է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային կոնվենցիաներով սահմանված հիմնարար դրույթներին:

16. Ռազմավարության հայեցակարգային շրջանակը պայմանավորված է նաև Հայաստանում գործող միջազգային զարգացման գործակալությունների և կազմակերպությունների հետ կնքած համագործակցության համաձայնագրերով, ինչպիսիք են՝ Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը», «Հայաստանի համար ՄԱԿ Կայուն զարգացման գործընկերության 2021-2025 թվականների շրջանակը», Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությունը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ առկա «Հայաստանի Հանրապետությանը ուղղակի տրամադրվող աջակցության» համաձայնագրերը և այլն:

17. **Միջգերատեսչական համակարգում.** Սույն Ռազմավարությունը մշակելիս իրականացվել է այլ նախարարությունների և գերատեսչությունների կողմից մշակույթի ոլորտին առնչվող առկա և պլանավորված բարեփոխումների ու ռազմավարական ծրագրերի մանրամասն քարտեզագրում, որը նույնպես հաշվի է առնվել Ռազմավարության հայեցակարգային շրջանակը սահմանելիս: Ապահովվել են հիմնական բարեփոխումների բովանդակային ներդաշնակեցումը:

2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

18. Ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը մշակվել են հետևյալ հիմնարար սկզբունքներով.

1. **Մարդակենտրոնություն և իրավունքահենություն.** Այս սկզբունքի հիմքում են Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային գործունեություն իրականացնելու յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիությունը:
2. **Թափանցիկություն և հաշվետվողականություն.** Ռազմավարության և գործողությունների ծրագրերի մշակման, իրականացման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է լինելու հանրությանը հանրային քննարկումների, հանդիպումների, մտագրոհների միջոցով:
3. **Մասնակցայնություն և ներառականություն.** Ռազմավարության և գործողությունների ծրագրերի բոլոր փուլերում հաշվի են առնվում շահագրգիռ բոլոր կողմերի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների դիրքորոշումները:
4. **Իրագործելիություն և չափելիություն.** Այս սկզբունքը վերաբերում է գործողությունների ծրագրին. թիրախավորվում են առավել հրատապ

լուծում պահանջող խնդիրները՝ հաշվի առնելով ժամանակային հնարավորությունը և ֆինանսական միջոցների հատկացման կարևորությունը, ինչպես նաև նախկին ռազմավարությունների և դրանց գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները և լուծման հնարավորությունները: Գործողություններն ու իրականացման ժամկետները ձևակերպվել են՝ հաշվի առնելով դրանց չափելիությունը, որպեսզի հնարավոր լինի իրականացնել արդյունքների գնահատում:

5. **Շարունակական կատարելագործում.** Այս սկզբունքն ընդգծում է ռազմավարության և գործողությունների ծրագրերի շարունակական կատարելագործման կարևորությունը: Դրանք կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով ընթացիկ զարգացումները, որոշակի իրավիճակներում գործողությունների իրականացման ճանապարհին, իրավահարաբերություններում ծագած որևէ խնդրի հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը:

2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆԱԽԱՆՇՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ[1] ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

19. Արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումների համատեքստում փոփոխվում է նաև մշակույթի և ստեղծարար ոլորտների դերը: Հատկապես 2020 թվականին ՔՈՎԻԴ-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով ձևավորված նոր իրողությունները և մարտահրավերները վերարժևորեցին մշակույթի դերը՝ որպես տնտեսության կայուն զարգացման, առողջ և ներառական հասարակության, մարդկային կապիտալի զարգացման, ազգային-հոգևոր արժեհամակարգի ձևավորման կարևոր գործոնի: Առանձնակի կարևորվեց մշակութային հաղորդակցության թերապևտիկ նշանակությունը ճգնաժամային իրավիճակներում:

20. Ռազմավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության առաջնահերթությունները՝ ուղղված մշակույթի պահպանությանը և տարածմանը, մշակութային և ստեղծարար ոլորտների խթանմանը և երկրի կայուն զարգացման գործընթացներում վերջիններիս դերի ընդլայնմանը, մշակույթի և ժամանակակից արվեստի հասանելիությանը և սոցիալական ներառականությանը, ժողովրդավարական արժեքների գերակայության ամրապնդմանը և բարեկեցիկ

[1] «Ստեղծարար ոլորտներ» - ձեռնարկատիրական այնպիսի գործունեություն, որում տնտեսական արժեքը անքակտելիորեն կապված է մշակութային բովանդակության հետ:

հասարակության ձևավորմանը, հայկական մշակույթի միջազգային ինտեգրմանը և միջազգային շուկաներում մրցունակության ապահովմանը:

21. Ստեղծարար ոլորտը նոր տնտեսության զարգացման խթանիչ գործոններից է, հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվողների համատեքստում: Այն ենթադրում և պահանջում է ցանցային ներգրավվածություն, գաղափարների առատություն, գաղափարական թիմերի առկայություն, նորարար մտածողությամբ խաղացողներ (արվեստագետներ), հատուկ ֆինանսավորում և ակտիվ մասնակցայնություն ու համագործակցություն:

22. Այսօր «Ստեղծարար արդյունաբերություն» եզրույթը «հավասարազոր է Մշակութային արդյունաբերություն» եզրույթին: Արդյունաբերական հասարակությունը աստիճանաբար վերափոխվում է մտավորի, հետևաբար խնդիրներ լուծելիս ստեղծարար մոտեցման կիրառումը մրցունակության գրավականն է:

23. Եթե մշակութային արդյունաբերություն հասկացությունը ավելի շատ հարակից է մշակութային ժառանգությանը և ստեղծագործության ավանդական ձևերին, ապա ստեղծարար արդյունաբերությունը ենթադրում է կիրառական արվեստներ, նորարարություն, եկամտի աղբյուրների և աշխատատեղերի ստեղծում՝ մտավոր սեփականության օգտագործմամբ:

24. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում ստեղծարար արտադրության և ծառայությունների շրջանառությունն ամբողջ աշխարհում կրկնապատկվել է՝ հասնելով 624 միլիարդի: Եվրոպական Միության երկրներում մշակութային և ստեղծարար ոլորտները, որտեղ ընդգրկված է շուրջ 12 մլն մարդ (բնակչության 7,5%), կազմում է համախառն արտադրության 5,3 %:

25. «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշների համաձայն՝ մշակույթը նշանակալի մասնաբաժին ունի ազգային տնտեսության և համախառն ներքին արդյունքի կազմում (ՀՆԱ-ի 3.33%), թեպետ առկա վիճակագրական տվյալների հիման վրա հնարավոր չէ գնահատել մշակույթի ազդեցության լիարժեք դերը:

26. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2021 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի հաշվետվության համաձայն՝ մշակույթ, զվարճություններ և հանգիստ ուղղությամբ 2021 թվականի դեկտեմբերին եկամուտը կազմել է ՝ 22 005.5 մլն դրամ, 2020 թվականի դեկտեմբերին՝ 99.9 %, 2021 թվականի դեկտեմբերին՝ 113.8%, 2021 թվականի հունվար-դեկտեմբեր՝ 234 232.9 մլն դրամ, ընդամենը՝ 12.5, 2021 թվականին 2020 թվականի նկատմամբ՝ 68.5, այդ թվում՝ ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեությունը 2021 թվականին կազմել է 3 806.5 մլն դրամ, որը 2020 թվականի համեմատությամբ կազմել է 165.9%:

27. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2023 թվականի մարտ ամսվա տվյալներով՝ մշակույթ, զվարճություններ և հանգիստ ուղղությամբ մատուցված ծառայությունների գումարը կազմել է 23 487.5 մլն դրամ (տոկոսային արտահայտմամբ՝ 2022 թ. մարտ ամսվա 111%-ի փոխարեն 2023 թ. այն կազմել է

118,4%): Ընդ որում՝ ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեությունը 2023 թ. կազմել է 643.6 մլն դրամ, ինչը 2,1 անգամ ավելի է եղել 2022 թվականի նույն ժամանակամիջոցի տվյալներից:

28. Մշակույթի ոլորտում զբաղվածությունը դիտարկելիս ստանում ենք առավել խոր պատկերացում, որն ապացուցում է մշակույթի բարձր կարևորությունը տնտեսության համար՝ ծառայելով որպես աղքատության նվազեցման միջոց:

29. Վերոնշյալ հետազոտության համաձայն՝ մշակույթի կառավարումը կայուն հիմքի վրա է, այդուհանդերձ, Հայաստանում մշակութային ենթակառուցվածքների առկա վիճակը ոչ միայն նվազեցնում է մշակույթի հասանելիությունը, այլև խաթարում է մշակութային արտադրության, բաշխման և գործածման հնարավորությունները:

30. Երևանում կենտրոնացած է երկրի բնակչության 36 %, սակայն այդտեղ են, օրինակ, թանգարանների 64 %, ցուցադրությունների կազմակերպման վայրերի 64 %:

31. Մշակույթի ոլորտում քաղաքականության մշակումն ու իրականացումը վերապահված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Սակայն ոլորտին առնչվող կարգավորումները հատվում են նաև այլ գերատեսչությունների գործառույթների հետ:

32. Հայաստանի Հանրապետությունն անդամակցում և համագործակցում է մշակույթի բնագավառում միջազգային տարբեր կազմակերպությունների և միավորումների հետ, մասնավորապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական Միության, ԱՊՀ-ի, ԵԱՏՄ-ի, Համաշխարհային բանկի, Բրիտանական Խորհրդի, ինչպես նաև այլ միջազգային մասնագիտական կառույցների: Ոլորտի քաղաքականությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՈԼՈՐՏԻ ՄԱԿՐՈՄԻՋԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

33. Ռազմավարության շրջանակում իրականացվել է ոլորտի մակրոմիջավայրի ընդհանուր վերլուծություն՝ քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական մակարդակներում, որի արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական գործոնների ամփոփ ցանկ

Քաղաքական	Տնտեսական
• Ժողովրդավարական պետություն • Մայրաքաղաք (Երևան) և 10 մարզ • Բարդ քաղաքական պատմություն • Չլուծված հակամարտություններ • Տարածաշրջանային հակամարտության ազդեցություն • Տարածաշրջանային սահմանային անցանելիության սահմանափակումներ	• Ավանդական արդյունաբերական կարգերից անցում դեպի գիտելիքահեն տնտեսություն • Կախվածություն արտաքին ֆինանսավորումից • Միջազգային զբոսաշրջությունը՝ որպես զարգացման առանցքային ոլորտ • Մշակույթի և մշակութային-ստեղծարար ոլորտների ռազմավարական նշանակություն • Կենտրոնացված մշակութային և ստեղծարար ոլորտներ
Սոցիալ-մշակութային	**Տեխնոլոգիական**
• 3 միլիոն բնակչություն • 98% էթնիկ հայեր • Հնագույն պատմամշակութային ժառանգություն ՀՀ տարածքում և Հայաստանի սահմաններից դուրս • Ռուսերենի և անգլերենի լայն տարածում • Կենտրոնացված մշակութային կյանք • Հայկական սփյուռք (ավելի քան 7 միլիոն) • Համավարակների ազդեցություն	• Ինտերներտի լայն կիրառություն • ՏՀՏ ուղղությամբ պետական քաղաքականության ներդրում • Կայացած ՏՀՏ ոլորտ • Թվայնացման ռազմավարություն, այդ թվում մշակութային ժառանգության թվայնացման առաջնահերթություն • Թվային բնագավառների փոխակերպում

3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Ռազմավարությունը կառուցված է մշակութային ժառանգության և ստեղծարար ոլորտների համընդգրկուն վերլուծությունների հիման վրա:

35. Ուսումնասիրությունը և խնդիրների վերհանումն իրականացվել է 4 հիմնական ուղղություններով՝ ա) **մշակութային ժառանգության պահպանություն և փոխանցում, բ**) **մշակութային և ստեղծարար ոլորտների արդիականացում, գ**) **նորարարություն, մշակութային հասանելիություն և ներառականություն, դ) միջազգային համագործակցություն,** որոնք ամբողջացնում են ոլորտի զարգացման միտումները:

36. Ռազմավարության մշակման շրջանակում իրականացվել է վերոնշյալ ուղղություններին առնչվող ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն (Աղյուսակներ 2-5):

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ

37. Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգությունն անցյալում ստեղծված մշակութային արժեքների ամբողջությունն է, որը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի մշակութային ինքնության պահպանման ու զարգացման, համաշխարհային քաղաքակրթության մեջ ներդրման համար հնագիտական, ճարտարապետական, պատմական, գեղագիտական կամ սոցիալ-մշակութային հայեցակետից ունի կարևոր նշանակություն:

38. Մշակութային ժառանգությունը, նյութական և ոչ նյութական, համարվում է ազդեցիկ գործոն միջմշակութային երկխոսության կառուցման, այլ մշակույթների և արժեքային բազմազանության հանդեպ հանդուրժողականության հաստատման, ինչպես նաև հավաքական ինքնության և արժեքային համակարգերի ձևավորման գործում:

39. Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը և փոխանցումը համարվում է պետության առաջնահերթություններից մեկը, որը հատկապես առաջնային նշանակություն ստացավ 2020 թ. և 2023 թ. Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմներից հետո՝ Ադրբեջանի կողմից տարվող մշակութային ցեղասպանության քաղաքականության և հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և ինքնության աղավաղման քայլերի հետևանքով, որով նոր մարտահրավեր ստեղծվեց Հայաստանի սահմաններից դուրս հայկական մշակութային ժառանգության պահպանության համար: Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ է մնացել մեծամասամբ հայոց պատմության և մշակույթի առնվազն 5000 նշանավոր

անշարժ հուշարձան, այդ թվում՝ Ամարասի, Գանձասարի, Դադիվանքի վանական համալիրները, Տիգրանակերտի, Ազոխի, Նոր Կարմիրավանի, Միրիկի, Կերենի հնավայրերն ու բազմաթիվ բերդեր, ամրոցներ, սրբավայրեր և այլ հուշարձաններ: Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել նաև 19 պետական թանգարան, ինչպես նաև Շուշիի գորգերի ու Հայկական դրամի մասնավոր թանգարանները:

40. Միաժամանակ ընդհատվել է այդ տարածքներում հազարամյակների կենսագործունեություն ծավալած բնիկ հայ ժողովրդի մշակութային ինքնության փոխանցման շղթան, տեղի է ունեցել այդ ժառանգությունը կրող համայնքների, խմբերի և անհատների մշակութային ինքնության, ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների կորուստ: Այս համատեքստում կարևորվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի մշակութային իրավունքների պաշտպանությունը և հավաքական ինքնության պահպանության և փոխանցման շարունակականությունը ապահովումը՝ գործադրելով ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության հնարավոր գործիքակազմերը և միջազգային նորմատիվ իրավակարգերը:

41. Մշակութային ժառանգությունը առանցքային դերակատարում ունի ազգային անվտանգության ապահովման համակարգում՝ անհատի և հասարակության մշակութային ինքնության և պետականության հանդեպ պատասխանատվության ձևավորման գործընթացներում:

42. Մյուս կողմից մշակութային ժառանգությունը կարևոր դեր ունի սոցիալական և տնտեսական զարգացման, հատկապես կրթության, աշխատատեղերի ավելացման, զբոսաշրջության զարգացման համար: Այս համատեքստում հատկապես կարևոր է համայնքների ներգրավվածությունը ժառանգության պահպանության, արժևորման, փոխանցման և հարստացման գործում:

43. Ուստի, Ռազմավարությունը մշակութային ժառանգության պահպանության և կառավարման գործընթացներում կարևորում է համայնքների և իշխանությունների ակտիվ ներգրավվածությունը, և այս նպատակով հավաքական սոցիալական պատասխանատվության և մասնակցային քաղաքականության ձևավորմանն ուղղված համալիր գործողությունների մշակումը և կիրարկումը:

Աղյուսակ 2. Մշակութային ժառանգության ՈՒԹՀՍ վերլուծության ամփոփում

Ուժեղ կողմեր և հնարավորություններ	Թույլ կողմեր և սպառնալիքներ
• Մշակութային հարուստ ժառանգություն (նյութական և ոչ նյութական) • Ավելի քան 24,250 հուշարձան • Ավելի քան 135 թանգարան • Ավելի քան 2 միլիոն թանգարանային նմուշներ/միավորներ • Ուրարտական քաղաքակրթության ժառանգության կրող • Շուրջ 500 գրադարան • Մշակութային ժառանգությանն առնչվող կայացած օրենսդրական դաշտ: • Մշակութային ժառանգության ռազմավարական դեր / արժեք զբոսաշրջությունը և ներդրումները խթանելու մեջ • Անդամակցություն միջազգային կառույցներին • Թվային տեխնոլոգիաների կիրառություն՝ ժառանգության պահպանմանը նպաստելու և դրա փոխանցման ձևերի, օգուտների ու շահառուների ցանկն ընդլայնելու նպատակով	• Հուշարձանների վտանգվածություն բնական գործոնների, խիտ բնակեցման, հողօգտագործման և այլ հանգամանքների պատճառով • Արևմտահայերենի վտանգվածություն • Մշակութային ժառանգության արժեքների վերաբերյալ տեղեկատվական և ճանաչողական բացեր • Մշակութային ժառանգության բովանդակության, տեղեկատվության և արժեքների հասանելիություն: • Ժամանակակից գիտական, կրթական հմտությունների, կապերի, բովանդակության և ռեսուրսների մատչելիություն • Անբավարար ֆինանսական միջոցներ • Արտերկրում հայկական մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված սպառնալիքներ

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

44. Հայաստանն աշխարհին ներկայանում է նաև իր ժամանակակից կատարողական և վիզուալ արվեստներով. թատերարվեստ, երաժշտարվեստ, կերպարվեստ, կինոարվեստ, պարարվեստ: Արդյունքը՝ մրցունակ արվեստային արտադրանքի ստեղծումն է, ստեղծագործական գործընթացների խթանումը, արվեստի նոր նախագծերի ներդնումը, մշակութային կյանքին հասարակության ներգրավումը, ոլորտի ստեղծարար ներուժի ակտիվացումը:

45. Միևնույն ժամանակ, կատարողական և վիզուալ արվեստը (մշակութային և ստեղծարար ոլորտ) միջմշակութային երկխոսության առանցքային բաղադրիչներից է, որը ոչ միայն նպաստում է միջազգային համագործակցության ընդլայնմանը, այլև, որն ավելի կարևոր է, խթանում է ստեղծագործական կարողությունների ձևավորումն ու շարունակական կատարելագործումը, ապահովում սերնդափոխությունը:

46. Մշակութային և ստեղծարար արդյունաբերության ոլորտը վերջին տարիներին ամենաարագ զարգացող բնագավառներից է, որն օժտված է տնտեսական աճը խթանող մեծ ներուժով: Այսօր, ստեղծարար արդյունաբերությունը սահմանվում է որպես անհատների և բիզնեսների համակցություն, որոնք մատուցում են մշակույթի, արվեստի նորարար ապրանքներ ու ծառայություններ և նոր շունչ հաղորդում արտադրությանը, ծառայություններին, առևտրի և ժամանցի բնագավառներին:

47. Ստեղծարար ոլորտների և ստեղծարար արդյունաբերության զարգացումը մեր օրերում ներդաշնակորեն համադրվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և արհեստական բանականության հնարավորությունների գործադրման հետ: Նման ձևաչափը Հայաստանում կիրառվել է 2019 թվականին (WCIT-2019 միջազգային համաժողովի շրջանակներում Երևանում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և 15 երկրի 110 երաժիշտ հանրությանը ներկայացրեցին արհեստական բանականության կողմից գրված երաժշտությունը՝ հիմնված հայկական շարականների վրա):

48. Տնտեսության կայուն զարգացմանը նպաստելուն զուգահեռ, ստեղծարար տնտեսությունը ստեղծում է ոչ նյութական արժեքներ և ապահովում կայուն մարդակենտրոն աճ, նպաստում է արտահանմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

49. Այս համատեքստում առանձնակի կարևորվում է ազգային և ժողովրդական արվեստը, կատարողական արվեստի միջոցով ժողովրդական և ազգագրական մշակույթի հանրային ընկալման և վարկանիշի բարձրացումը, մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացումը, որը կնպաստի համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, ժողովրդական և հայրենասիրական երաժշտությունը բնակչության կենցաղ ներմուծմանը:

50. Հետևաբար, մշակութային և ստեղծարար ոլորտը կարևոր դեր ունի երկրի կրթական, սոցիալ-տնտեսական զարգացման գործում, հատկապես կարևոր է համայնքներում ստեղծարար և նորարարական կենտրոնների ու լաբորատորիաների հիմնումը, որը նպաստում է ոչ միայն համայնքների մշակութային կյանքի, այլև ստեղծարար մտքի զարգացմանը, մշակութային արդյունքի և նոր աշխատատեղերի ստեղծմանը, մշակութային կյանքի ապակենտրոնացմանը:

51. Մշակութային և ստեղծարար ոլորտի զարգացման քաղաքականության առաջնահերթություններին համապատասխան՝ պետական հատկացումներն ուղղվում են

մշակութային արդյունքի ստեղծմանը, ձեռքբերմանը և պատշաճ մատուցմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, միջմարզային համագործակցության խթանմանը, միջազգային հարթակներում հայկական արվեստի դիրքավորմանը:

52. Ի դեմս անհատ ստեղծագործողների և ոլորտում ներգրավված կազմակերպությունների, փառատոների, հրատարակչությունների, մուլտիմեդիայի ոլորտում գործող ընկերությունների, այլ ստեղծագործական գործունեություն ծավալողների՝ Հայաստանն ունի ժամանակակից վիզուալ և կատարողական արվեստի կայուն ինստիտուցիոնալ համակարգ:

53. Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակույթը՝ հանուն զարգացման» (ՄՀԶ) ցուցիչների՝ մշակութային գործունեությանը բաժին է ընկնում Հայաստանի ՀՆԱ-ի 3.33%-ը: Դա մեծապես ապահովվում էր աուդիո-վիզուալ և ինտերակտիվ մեդիայի գործոնով (78%), որին հաջորդում են գրքերը և մամուլը (7%), արվեստի ներկայացումները և տոնակատարությունները (7%), դիզայնի և ստեղծարար բիզնեսները (5%) և մշակութային ու բնական ժառանգությունը (3%): Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2014 թվական տվյալների՝ մշակույթի և ստեղծարար ոլորտներում աշխատում է ավելի քան 50,000 մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության զբաղվածության գրեթե 5%-ը (ՅՈՒՆԵՍԿՕ, 2017 թվական): Որոշ գնահատականներով, աշխարհում CreaTech ինդուստրիայի տարեկան միջին աճը 2020–2025 թթ. կարող է կազմել 5%, իսկ շուկայական ծավալը 2025 թ. կհասնի 2.6 տրիլիոն դոլարի: Մի շարք փորձագետների կարծիքով 2030 թվականին ստեղծարար ոլորտի բաժինը կարող է կազմել ՀՆԱ-ի 10%.[2]

54. Թեև կառավարությունը կարևորում է մշակույթի և ստեղծարար ոլորտի ռազմավարական նշանակությունը Հայաստանի տնտեսության և հասարակության զարգացման գործում, այդուհանդերձ, հետազոտությունները ցույց են տալիս, որ ոլորտի ներկայացուցիչների որոշ շրջանում առկա է այն համոզումը, որ իրենք դեռևս բավարար չափով և համակողմանիորեն ներգրավված չեն պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերում:

55. Հաշմանդամություն ունեցող նկարիչների և արվեստի գործիչների ներառական ներգրավվածության ապահովումը Կառավարության կողմից սահմանված է որպես հատուկ առաջնահերթություն՝ հատկապես հաշվի առնելով վերջերս տեղի ունեցած զինված հակամարտության հետևանքները:

56. Կարևորվում է վարչարարության և իրավակարգավորման ավելի բարենպաստ համակարգի ստեղծումը, որը կխթանի բարեգործությունը, շուկայական մրցակցությունը,

[2] Տես՝ https://unescofutures.hse.ru/news/824123788.html

միջազգային համագործակցությունը, ռեսուրսների ճկուն կառավարումը և առևտրային եկամուտների ստեղծումը:

57. Առկա կանոնակարգերը, օրենսդրական կարգավորումները սահմանափակում են պետական և համայնքային ֆինանսավորմամբ գործող մշակութային հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություններ) եկամուտները դիվերսիֆիկացնելու և հավելյալ ֆինանսական միջոցներ կուտակելու հնարավորությունը, ինչը, իր հերթին, շարունակական է դարձնում նրանց կախվածությունը պետական ֆինանսավորումից և թույլ չի տալիս նրանց դրսևորել անհրաժեշտ նախաձեռնողականություն և ինքնաբավություն:

58. Որպես հետևանք՝ Հաստատություններում առկա են ռազմավարական մտածողության և պլանավորման ցածր ցուցանիշներ, բացակայում են ինստիտուցիոնալ տեսլականի, ձևակերպված առաքելության կամ երկարաժամկետ զարգացման պլանավորման գործընթացներ:

59. Մարդկային ռեսուրսների տեսանկյունից շուկայավարման, ֆինանսների կառավարման և ֆոնդհայթայթման ուղղություններով առկա է հմտությունների ու գիտելիքների ցածր մակարդակ:

60. Վերջին հետազոտությունները փաստում են, որ մշակութային և ստեղծարար ոլորտներում գործող կազմակերպություններում սակավաթիվ են արդյունավետ մարքեթինգային ռազմավարությունները, և տարբերակում չի դրվում ինստիտուցիոնալ ու ծրագրային շուկայավարումների միջև[3]:

61. Պետության կողմից ֆինանսավորվող մշակութային հաստատություններում կարևորվում է մշտադիտարկման և գնահատման արդյունավետ համակարգերի ներդնումը, որոնք կնպաստեն կապիտալի ու եկամուտների արդյունավետ բաշխմանը և օգտագործմանը՝ բարելավելով կազմակերպությունների և դրանց աշխատուժի գործունեության և ազդեցության մակարդակը գնահատելու և կառավարելու կարողությունը:

[3] Տես՝ Muradyan, T. and Zeitountsian, Z. (2020). *Perspectives on contemporary art management in public sector. Final narrative report*. Unpublished.

Աղյուսակ 3. Մշակութային և ստեղծարարության ոլորտի (ՄՍՈ) ՈՒԹՀՍ վերլուծություն

Ուժեղ կողմեր և հնարավորություններ	Խնդիրներ և մարտահրավերներ
ՄՍՈ քաղաքականություններ և հարթակներ Մշակութային քաղաքականության շրջանակում ավելի է կարևորվում պետություն-մասնավոր հատվածի համագործակցությունը և ՄՍՈ ապրանքների և հաստատությունների շուկայական կողմնորոշումը: • Մշակութային ժառանգությանը և զբոսաշրջությանը առնչվող ՄՍՈ բիզնեսները խթանելու միտվածություն (որպես գերակա ոլորտ). • ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակույթը՝ հանուն զարգացման» ցուցիչների բարելավում՝ ելնելով ոլորտի ներազդեցությունների մշտադիտարկման կարիքներից. • Բաց երկխոսություն կառավարության և ոլորտի մասնագետների միջև:	**ՄՍՈ քաղաքականություններ և հարթակներ** • ՄՍՈ-ն դիտարկված չէ Հայաստանի արտահանմանը միտված արդյունաբերական զարգացման ռազմավարության մեջ. • ՄՍՈ զարգացման համապարփակ ռազմավարության բացակայություն. • Մշակութային քաղաքականության և կառավարման կենտրոնացված վերահսկողություն: • ՀՏ ոլորտի և ստեղծագործական համայնքների միջև թույլ փոխգործակցության. • Համեմատաբար թույլ զարգացած քաղաքացիական հասարակություն և համակարգված համագործակցության բացակայություն ՄՍՈ-ների շրջանում. • Ստեղծագործական և մասնագիտական միությունները լավ հարմարված չեն շուկայական նոր կանոններին և փորձին:
ՄՍՈ կառույցներ և ենթակառուցվածքներ • Մշակույթի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության խթանում Երևանում և մարզերում • Գրադարանների նորոգում և վերազինում՝ որպես կրթական և մշակութային ժամանցի կենտրոններ • Նոր վայրեր ստեղծարար գործունեության համար (օրինակ՝ «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը) •	**ՄՍՈ կառույցներ և ենթակառուցվածքներ** • ՄՍՈ-ին ցուցաբերվող թույլ աջակցություն՝ նոր տարածքների օգտագործման հասանելիության առումով • Պետական և համայնքային ենթակայության մշակութային հաստատությունների կառավարման մոդելների արդիականացման անհրաժեշտություն • Գույքային և ենթակառուցվածքների արդիականացման անհրաժեշտություն

	•
ՄՍՈ ֆինանսավորում և աջակցություն • Հայաստանում գործող միջազգային ընկերությունների և կազմակերպությունների կողմից ՄՍՈ-ի մասնավոր ֆինանսավորման ի հայտ եկող հետաքրքրություն • Գրականությանը և հրատարակչությանը տրամադրվող պետական ֆինանսավորմանը հատկացվում է ավելի մեծ ուշադրություն • Մշակութային ապակենտրոնացման քաղաքականության շրջանակում մարզերում իրականացվող նախագծերի ֆինանսավորման առաջնահերթություն • Արվեստի ներառական ծրագրերի ֆինանսավորման առաջնահերթություն	**ՄՍՈ ֆինանսավորում և աջակցություն** • Պետական ֆինանսավորումը չունի ՄՍՈ-ի տարբեր շահագրգիռ կողմերի թիրախավորմամբ մրցակցային գործընթաց • Հովանավորության խրախուսմանն ուղղված օրենսդրական կարգավորումների անկատարություն • Մասնագիտական ներուժի և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ցածր մակարդակ • Մտավոր սեփականության իրավունքի նվազ կարևորում և օրենսդրական կարգավորումների կիրարկում:

3. **ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

62. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

63. Առկա են նաև մի շարք մարտահրավերներ հասանելիության, ներառականության և հասարակության՝ որպես մշակույթ արտադրող և սպառող հանրույթ համախմբվածության տեսանկյունից:

Մասնավորապես.

1. Անկախ համացանցի կիրառելիության բարձր մակարդակից՝ առկա են համացանցային ծառայություններից օգտվելու խնդիրներ՝ հատկապես սոցիալապես անապահով և տարեց մարդկանց շրջանում.
2. Առկա է անհամապատասխանություն մշակութային պահանջարկի և Հաստատությունների կողմից մատուցվող առաջարկի միջև, ընդ որում՝

հասարակության լայն զանգվածները նախապատվություն են տալիս ժամանցային բովանդակությանը[4].

3. Մարզերում առկա է մշակութային ենթակառուցվածքների հասանելիության և բաշխվածության անհամապատասխանություն: Կինոթատրոնները, թատրոնները, թանգարանները և այլ խոշոր մշակութային վայրերը անհավասարաչափ են բաշխված և ավելի կենտրոնացած են մեծ քաղաքներում, ինչպիսիք են Երևանը և Գյումրին: Ներգրավվածությունն ու զբաղվածության հնարավորություններն ավելի սահմանափակ են մյուս վայրերում, հատկապես փոքր համայնքներում: Մշակութային ապակենտրոնացումը սահմանվել է որպես առաջնահերթություն՝ հատկապես Հայաստանից արտագաղթի ավելացման համատեքստում[5]:
4. Բավարար չէ մշակութային և կրթական հաստատությունների փոխադարձ իրազեկվածության մակարդակը:

64. Նշված գործոնները ներկայացնում են թվային, մշակութային և, ի վերջո, սոցիալ-տնտեսական խզման ռիսկեր քաղաքային խոշոր կենտրոններում ապրող երիտասարդների, տարեցների և (կամ) ավելի փոքր գյուղական բնակավայրերի կամ տարածաշրջանի բնակիչների միջև:

65. Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում մարտահրավեր է նաև ռազմական գործողությունների ազդեցությունը քաղաքացիների, այդ թվում՝ արվեստագետների ֆիզիկական և/կամ հոգեկան առողջության վրա, ինչը բացասաբար է ներգործում մշակույթի զարգացման վրա:

---

[4] Տես՝ Muradyan, T. and Zeitountsian, Z. (2020). *Perspectives on contemporary art management in public sector. Final narrative report.* Unpublished.

[5] Տես՝ Grigoryan, A., Khalatyan, A., Mnatsakanyan, G., Ohanyan, M., Papoyan, S., Mlqe-Galstyan, S. (2017). A new cultural policy for Armenia's Regions: a policy brief for Culture & Creativity EU-Eastern Partnership Programme. No.19. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/policy-brief-19

Աղյուսակ 4. Մշակութային հասանելիություն և ներառականություն. ՈՒԹՀՍ վերլուծության ամփոփում

Ուժեղ կողմեր և հնարավորություններ	Խնդիրներ և մարտահրավերներ
Մշակութային կրթություն և հմտություններ • Մշակութային կրթական ծրագրերը՝ պետական մշակութային առաջնահերթություն: • Մասնավոր հատվածի նախաձեռնությունները նպաստում են ստեղծարար կրթական համակարգի կայացմանը • Ստեղծարար կրթության ապակենտրոնացումը ստեղծում է նոր ցանցեր և կենտրոններ (օրինակ՝ «Թումո» կենտրոնը, Լոֆթ, Գեղագիտության ազգային կենտրոն, Տեխնոպարկ և այլն) • Մշակութային կրթության որակական և քանակական աննախադեպ աճ. • Մեծ թվով դպրոցների, այդ թվում սահմանամերձ, և աշակերտների ընդգրկվածության. • Գեղագիտության ազգային կենտրոնի մասնաճյուղերի բացում. • Արվեստի պատմության դասագրքերի հրատարակում:	**Մշակութային կրթություն և հմտություններ** • Ստեղծարարությունն ու ձեռնարկատիրությունը ակտիվորեն չեն արծարծվում կրթական ծրագրերում • Արվեստի կառավարման մասնագիտական ներուժի և համապատասխան կրթական համակարգի անբավարարություն
Լսարանի և շուկաների ստեղծում • Տարաբնույթ մասնավոր նախաձեռնություններ, որոնք կապ են ստեղծում մշակույթի ու ստեղծարար ոլորտի և լայն լսարանի միջև • Ինտերնետի լայն կիրառություն	**Լսարանի և շուկաների ստեղծում** • Լսարանի ընդլայնման և սպառողների ներգրավման ռազմավարությունների բացակայություն • Ստեղծարար կրթության կենտրոնների անհամաչափ բաշխվածություն • Մշակույթի կառավարիչների և սպառողների համախմբման անհրաժեշտություն

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

66. Արտաքին հարաբերություններում կարևորվում է բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացումը, որն իրականացվում է մշակութային և ստեղծարար հատվածների, բարեկամ և գործընկեր երկրների, ինչպես նաև սփյուռքի համայնքների միջոցով:

67. Կառավարությունը կրում է հանձնառություն շարունակելու միջազգային ներգրավումը՝ ապահովելով մշակութային, սոցիալական և տնտեսական զարգացում, որոնք կարելի է իրականացնել մշակութային զբոսաշրջության, ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության միջոցով:

68. Միջազգային հարաբերությունների զարգացման և ընդլայնման ուղղությամբ կարևորվում է ռազմավարական համալիր գործողությունների իրականացումը՝ համապատասխան կառույցների, առկա միջազգային կապերի ու գործընկերությունների համախմբման և ամրապնդման, ինչպես նաև նոր հնարավորությունների օգտագործման միջոցով՝ հաշվի առնելով ընթացիկ մարտահրավերները և ռիսկերը:

69. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է Սփյուռքում հայապահպանության խնդիրը: Կազմակերպված և բնակության երկրներում արդյունավետ կերպով ներգրավված Սփյուռքի առկայությունը կարևոր է Հայաստանի միջազգային ներգրավվածության մակարդակի բարձրացման տեսակետից: Հայաստան-Սփյուռք կապի թուլացումը, փոխհարստացնող շփման բացակայությունը կարող են ռիսկային լինել հիմնարար շահերի առաջմղման տեսանկյունից:

Աղյուսակ 5. Միջազգային համագործակցություն.
ՈՒԹՀՍ վերլուծության ամփոփում

Ուժեղ կողմեր և հնարավորություններ	Խնդիրներ և մարտահրավերներ
• Սերտորեն փոխկապակցված ՄՍՈ միջազգային համայնք: • Միջազգային ստեղծարար համայնքներում սփյուռքի որոշիչ ընդգրկվածություն: • Մշակույթի՝ որպես երկրի միջազգային դիրքավորման պայմանի պետական կարևորում: • Միջազգային հեղինակավոր հարթակներում կայուն ներգրավվածություն (Կաննի, Բեռլինի կինոփառատոներ, Վենետիկի բիենալե)	• Մշակութային քաղաքականության տեսանկյունից առաջնահերթ միջազգային հարթակների գույքագրման, մասնակցության պետական աջակցության դիվերսիֆիկացման բացակայություն: • Մշակութային դիվանագիտության քաղաքականության շրջանակում

• Շնորհալի երիտասարդների առաջխաղացման և միջազգային ասպարեզում նրանց կրթությանն ու ներկայացվածությանը աջակցելու պետական քաղաքականություն: • Հայկական կինոյի միջազգային կապերն ու հնարավորություններն ընդլայնելու հանձնառություն • Փառատոների կայացում՝ որպես տարածաշրջանային և միջազգային համագործակցության հանգուցային հարթակներ • Անդամակցություն «Ստեղծարար Եվրոպային», ԱՊՀ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամ, ԵՎՐԻՄԱԺ:	ՄՍՈ-ների ներգրավվածության բացակայություն • Լեզվական խոչընդոտներ • COVID-19 համավարակով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումներ • Տարածաշրջանային շրջափակում և սահմանային խնդիրներ

4. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

70. **Ռազմավարության արժեքաբանական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը և դրանով ամրագրված մարդու հիմնարար իրավունքները, ազատությունները և պետական քաղաքականության նպատակները:** Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունք, ինչպես նաև սահմանում է, որ պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը, իսկ հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

71. Հաշվի առնելով սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնարար իրավունքները, ինչպես նաև նախանշված զարգացման հիմնական ուղղությունները, Ռազմավարությունը սահմանում է մշակույթի զարգացման **գերակայությունները և տեսլականը**, որի համաձայն ապահովվում է.

1. ***Մշակութային ժառանգության պահպանությունը և անխաթար փոխանցումը սերունդներին:*** Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը՝ նյութական և ոչ նյութական, պահպանված է ապագա սերունդների համար և հասանելի է արդիական, գրավիչ եղանակներով:

2. ***Ստեղծարար ոլորտների զարգացման և ստեղծագործողների կարողությունների դրսևորման ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորումը:*** Ազատ ստեղծագործական ինքնադրսևորման համար ստեղծված են նպաստավոր պայմաններ, մշակութային հաստատությունները, ստեղծարար բիզնեսները և գործիչները լիարժեք ներգրավված են, ստեղծարարությունը, բազմազանությունը և գեղարվեստական որակը սոցիալական և տնտեսական զարգացման բաղկացուցիչ մաս են:
3. ***Մշակույթի հասանելիությունը և ներառականություն:*** Յուրաքանչյուր ոք, անկախ տարիքից, ծագումից, դավանանքից, ունի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք և ակտիվորեն ներգրավված է բարձրորակ մշակութային կրթության և ծառայությունների մեջ, որն իր հերթին նպաստում է կյանքի որակի և բարեկեցության բարձրացմանը:
4. ***Հայաստանի դիրքավորումը որպես համաշխարհային քաղաքակրթական արժեքների կրող և ստեղծող երկիր:*** Հայաստանը՝ որպես մշակութահեն և քաղաքակիրթ երկիր, ընդգրկված է միջազգային տարբեր հարթակներում՝ քաղաքական, տնտեսական, մտավոր, ստեղծագործական և մշակութային բաղադրիչներով:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐ

72. Ռազմավարությունը սահմանում է ռազմավարական հետևյալ Գլխավոր նպատակները՝

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

73. Գլխավոր Նպատակը 1-ը սահմանում է հայկական մշակութային ժառանգության պահպանության, փոխանցման ապահովում՝ տեղեկատվության, բովանդակության, հմտությունների և գիտելիքների հասանելիության արդիականացման և բարելավման միջոցով:

1.1 Մշակութային ժառանգության գույքագրում և ինստիտուցիոնալացում

74. Կշարունակվի հայ ժողովրդի մշակութային ժառանգության համապարփակ հետազոտությունը և քարտեզագրումը ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ ամբողջ աշխարհում՝ դրանք հաշվառելով ծագումից մինչև մեր օրերը՝ նախատեսելով նույնականացում և դասակարգում՝ ըստ դրանց գտնվելու վայրի և տեսակների:

75. Մինչև 2027 թ. նախատեսվում է գույքագրել հայկական պատմամշակութային անշարժ, շարժական և ոչ նյութական մշակութային ժառանգության 60 %-ը:

1.2 Մշակութային ժառանգության թվային հասանելիություն

76. Վերոնշյալ գույքագրման և քարտեզագրման միջոցով հայտնաբերված տվյալները և արժեքները կներկայացվեն նոր ու բարելավված թվային ռեսուրսների, այդ թվում՝ համապարփակ թվային հարթակների միջոցով: Այլ ռեսուրսների թվում կլինեն նոր, ընդլայնված և արդիականացված շտեմարանները, որոնցում կզետեղվի թանգարանների հավաքածուների, ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, հուշարձանների և գրավոր ժառանգության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում մինչև 2027 թ. նախատեսվում է թանգարանային առարկաների շտեմարանի համալրում՝ 40%, ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում՝ 80 %, և հուշարձանների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում՝ 60 %:

1.3 Մշակութային ժառանգության ոլորտում բովանդակության արդիականացում, մասնագիտական կարողությունների կատարելագործում և շարունակական զարգացում

77. Հայաստանի մշակութային ժառանգության ոլորտի մասնագետների կարողությունների և կատարողականության զարգացման նպատակով կմշակվեն շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր:

78. Մշակութային ժառանգության ոլորտում կմշակվեն և կրթական ծրագրում կներդրվեն նոր ուսումնական նյութեր, քայլեր կձեռնարկվեն մշակութային ժառանգության բնագավառում մասնագիտական գրականության արդիականացման ուղղությամբ:

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

79. Գլխավոր նպատակ 2-ը կենտրոնացած կլինի Հայաստանի մշակութային և ստեղծարար ոլորտներում գործող հաստատությունների, ինքնազբաղ ստեղծագործողների և մասնավոր կազմակերպությունների կարողությունների և կենսակայունության զարգացման վրա:

2.1 Մշակութային և ստեղծարար ոլորտներում կառավարման մոդելների արդիականացում

80. Մշակութային և ստեղծարար ոլորտների առջև ծառացած խնդիրները վերհանելու և լուծելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվում են շարունակական հետազոտություններ ու վերլուծություններ, այդ թվում օրենսդրական բարեփոխումներ, պետական և համայնքային մշակութային հաստատությունների կատարողական հիմնական արդյունքային ցուցանիշների (ներառյալ քանակական և որակական ցուցանիշները) մշակում և մշակութային ինքնաֆինանսավորման խթանում, կառավարման համակարգերի

արդիականացում, միասնական ավտոմատացված տոմսային համակարգի ծառայությունների և ֆինանսավորման նոր մոդելի ներդնում, մշակութային և ստեղծարար ոլորտներում մրցանակների սահմանում և մրցանակաբաշխությունների անցկացում:

81. Վերոնշյալ մրցանակաբաշխությունների անցկացման նպատակն է խթանել ստեղծարար ոլորտի զարգացումը և ինքնազբաղ արվեստագետների ու ստեղծարար համայնքի կողմից նոր, հետաքրքիր և Հայաստանում ու նրա սահմաններից դուրս մրցունակ գաղափարների և նախագծերի ստեղծումը: Մրցանակները՝ ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված, տրվելու են Ա դասի երաժշտական, թատերական և կինոփառատոներին, ինչպես նաև արվեստի բիենալեներին մասնակցության և մրցանակներին արժանանալու համար: Միջազգային մրցանակների արժանացած արվեստագետները 1 տարվա ընթացքում կստանան անվանական թոշակ:

82. Վերոնշյալ միջոցառումների նպատակն է՝ պետական հատկացումների օգտագործման արդյունավետության բարձրացումը, մասնավոր հատված-պետության համագործակցության խթանումը, նշյալ հաստատությունների ֆինանսական կայունության ապահովումը և հանրային վարկանիշի բարձրացումը և հովանավորության խթանումը: Մինչև 2027 թվականը նախատեսվում է ֆինանսավորման նոր մոդելը ներդնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող բոլոր թատերահամերգային կազմակերպություններում:

2.2 *Մշակութային և ստեղծարար ոլորտներում ինքնազբաղ ստեղծագործողների գործունեության խթանում*

83. Ժամանակակից կայուն ստեղծարար տնտեսության զարգացման համար, պետական մշակութային հաստատություններին զուգահեռ, կարևորվում է անկախ ստեղծարար համայնքի և ձեռնարկատիրական գործունեության աջակցությունը և հզորացումը: Այն կնպաստի ստեղծարար ձեռնարկատիրության և մշակութային արտադրության մեջ մասնակցայնության ու ներառականության ընդլայնմանը, մշակութային արտադրանքի ստեղծմանն ու արտահանմանը, եկամուտների դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև ստեղծարար և ձեռնարկատիրական ներուժի ներգրավմանը և զարգացմանը:

2.3 Մշակութային ներդրումների և բարեգործության խթանում, մշակույթի մեկենասության վարկանիշի ձևավորում

84. Պետական ֆինանսավորմանը և սեփական եկամուտներին զուգահեռ՝ աշխարհում մշակութային և ստեղծարար ոլորտի բազմաթիվ կազմակերպությունների ֆինանսավորման կարևոր աղբյուրները ներառում են մասնավոր անձանց, պետական

մարմինների և կորպորացիաների նվիրաբերությունները, դրամաշնորհները և հանգանակությունները:

85. Հայկական Սփյուռքը լայն հնարավորություն է ընձեռում հայ մշակույթը արտերկրում հանրահռչակելու, ինչպես նաև մշակույթի զարգացման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավման համար:

86. Հայաստանում մշակութային բարեգործության ոլորտի զարգացմանը միտված գործողությունները ներառում են պետական մակարդակով հովանավորությունը խրախուսող ծրագրերի մշակումը, ինչպես, օրինակ. հովանավորի (մեկենասի) հանրային ճանաչելիության վարկանիշի բարձրացում:

2.4 Նյութատեխնիկական բազայի, գույքի և ենթակառուցվածքների արդիականացում/բարելավում

87. Տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև հասարակության և արտադրողների փոփոխվող պահանջների համատեքստում նպատակամետ, առավել ևս մրցունակ մնալու համար առաջիկա հինգ տարիներին անհրաժեշտ կլինի ներդրումներ կատարել Հայաստանի մշակութային հաստատությունների և ենթակառուցվածքների բարեկարգման և արդիականացման ուղղությամբ: Մինչև 2027 թվականը նախատեսվում է ապահովել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների ենթակառուցվածքների արդիականացման 70%-ը:

88. Արդիականացումը ներառում է.

1. Թանգարանների, գրադարանների, թատրոնների և համերգասրահների տեխնիկական և շենքային պայմանների բարելավմանն ուղղված նպատակային ֆինանսավորում՝ ներառյալ ֆոնդային և ցուցադրական տարածքների, լուսավորության, ձայնային սարքավորումների և անվտանգության համակարգերի կատարելագործման ուղղությամբ:

2. Երաժշտական գործիքների և բեմական/համերգային զգեստների ձեռքբերման նպատակային ֆինանսավորում, որի շնորհիվ կապահովվեն մասնագիտական կատարելագործման պայմաններն ու կընդլայնվեն միջազգային համագործակցության շրջանակները, ստեղծագործական խմբերի պատշաճ ներկայանալիությունը:

3. Ներդրումներ մշակութային ժառանգության ոլորտում հետազոտական և վերականգնողական լաբորատորիաների, ֆոնդային տարածքների ստեղծման և արդիականացման համար:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԴԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

89. Գլխավոր նպատակ 3-ը միտված է հասարակության լայն շրջանակներին մշակութային հասանելիության ապահովմանը, ինչպես նաև արվեստի ճյուղերի և մշակութային արտադրանքի ու ծրագրերի շուկաների ընդլայնմանը;

3.1. Ազգային վերաինքնարժևորում և ինքնագիտակցում

90. Հայաստանում մշակութային և ստեղծարար ոլորտները զարգացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել մշակութային և ստեղծագործական արդյունքի և ծառայությունների առաջնային պահանջարկի մակարդակները:

91. Պահանջարկի «բազային» մակարդակի ձևավորման 1-ին տարում կանցկացվեն հետազոտություններ՝ նպատակ ունենալով այդ պահանջարկի ամենամյա ավելացումը ապահովել մինչև 2027 թվական, որի շրջանակում կիրականացվեն հանրության շրջանում մշակութային նախընտրությունների վերաբերյալ վարքաբանական հետազոտություններ: Հետագա գործողությունները կներառեն կենտրոնացված, կանոնակարգված գովազդային հարթակների մշակումը և ժամանակակից սոցիալական գործիքակազմի կիրառումը, նման հարթակների միջոցով մշակութային բովանդակության տարածումը, որը կնպաստի մշակույթի՝ հանրային ընկալման բարձրացմանը:

92. Կկազմակերպվեն ներպետական և միջազգային փառատոներ՝ նպաստելով ժողովրդական մշակույթը և հայրենասիրական երաժշտությունը բնակչության կենցաղ ներմուծելու գործընթացին: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել 6 փառատոն:

3.2 Մշակույթի ապակենտրոնացում

93. Մշակութային կյանքի ապակենտրոնացումը սահմանված է որպես գերակայություն՝ պայմանավորված համայնքների ընդհանուր զարգացվածության աստիճանով և բարոյահոգեբանական պայմաններով: Այս ուղղությամբ կատարվող գործողությունները ներառում են.

1. Գեղագիտական կրթության կենտրոնների զարգացում և մշակութային նախագծերին հատկացվող պետական դրամաշնորհային ծրագրերում համայնքների ներգրավում՝ 2027 թվականին այն հասցնել 90 %-ի:

2. Միջհամայնքային համագործակցության խթանում համատեղ երաժշտական-թատերական նախագծերի, կադրերի փոխանակման միջոցով՝ 2025 թվականին այն հասցնել 60 %-ի:

3. Համայնքների կրթամշակութային միասնական ցանցի ձևավորում, ինչը կխթանի համայնքներում պետական ֆինանսավորմամբ իրականացվող նոր նախագծերի իրականացումը, կրկնապատկելով 2023 թվականի ցուցանիշը՝ 2027 թվականին ապահովելով 80 % համայնքային ներգրավվածություն:

4. Համայնքներում գրադարանների դերի վերանայում՝ նոր ծառայությունների ներդրման միջոցով.

5. Ոլորտի մասնագետների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մենթորության ծրագրի մշակում և ներդնում:

6. Համայնքներում հիմնված երիտասարդական կենտրոնների ընդգրկվածություն պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում:

3.3 Մշակութային և կրթական քաղաքականությունների ներդաշնակեցում

94. Մշակութային և ստեղծարար ոլորտների որակն ու պահանջարկն ուղղակիորեն կախված են ընկալող միջավայրի (հանդիսատես, ունկնդիր)՝ կրթության և իմացության աստիճանից:

95. Այս համատեքստում կրթության և մշակույթի համադրումը պետական մշակութային քաղաքականության առաջնահերթություններից է:

96. Քաղաքականությունն իրականացվում է գերազանցապես տարաբնույթ կրթամշակութային նախագծերի միջոցով, որոնց արդյունքում ընդլայնվում է անվանի արվեստագետների շփման համատեքստը կրթական հաստատությունների հետ, ստեղծվում են նպաստավոր պայմաններ մասնագիտական կողմնորոշման համար:

97. Թիրախային միջոցառումները կարող են ներառել.

1. Մտավոր, կրթական, մշակութային և ժամանցային միջավայրերի զարգացում՝
2. այդ թվում երիտասարդական կենտրոնների և արվեստի կացարանների ստեղծման միջոցով. 2027 թվականին նշյալ կենտրոնների թիվը կհասնի 10-ի:

3. Մանկապատանեկան մշակութային նոր քաղաքականության ներդնում՝ ներառյալ թիրախային դրամաշնորհներն ու կրթամշակութային նախագծերը (թիվը կկրկնապատկվի՝ 2027 թվականին հասնելով 12-ի).

4. Թանգարանների և գրադարանների կրթական ծրագրերի ընդլայնում, որակական և քանակական նոր չափորոշիչների ներդնում. մինչև 2027 թվական մասնակիցների թիվը կկազմի 350 000 շահառու:

5. Կրթական ծրագրերի ներդնում արվեստի և մշակույթի կազմակերպիչների, այդ թվում՝ համադրողների, գրական գործակալների և կինոարտադրական ոլորտի կառավարիչների համար:

6. Գրականությանն ու ընթերցանության խրախուսմանն ու տարածմանն ուղղված նոր ծրագրերի իրականացում:

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿՐՈՂ ԵՎ ՍՏԵՂԾՈՂ ԵՐԿԻՐ

98. Գլխավոր նպատակ 4-ի հիմնական թիրախային շրջանակը ներառում է միջազգային շուկաներում հայկական մշակույթի և ստեղծարար ոլորտների ինտեգրմանը և Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված գործընթացները:

2.1 Մշակութային և արտաքին քաղաքականության համադրում և ներդաշնակեցում

99. Հայկական մշակույթի միջազգայնացման գործում կարևորվում է արտաքին քաղաքականության և մշակութային քաղաքականության համադրումը:

100. Հիմնական գործողությունները ներառում են.

1. Համագործակցության ամրապնդում միջազգային կազմակերպությունների և այլ միջազգային գործընկերների հետ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Մշակութային սեփականության պահպանման և վերականգնման ուսումնասիրություն-ների միջազգային կենտրոնը (ICCROM), ԵՄ-ն, Եվրիմաժը, «Բրիտանական խորհուրդը», «Կրթական, գիտական և մշակութային համագործակցության միջկառա-վարական հիմնադրամը» (IFESCCO), և այլն:

2. ԱԳՆ համակարգմամբ օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին կից ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և մշակույթի ոլորտի լիազոր մարմնի կողմից գործողությունների համատեղ ծրագրի մշակում՝ միջկառավարական աշխատանքային խմբի և տարեկան ծրագրի ձևավորման հիման վրա:

3. Միջազգային հեղինակավոր մշակութային շուկաների և մեդիա հարթակների գույքագրում և, ըստ մշակութային քաղաքականության առաջնահերթությունների, մասնակցության ապահովում:

4.2 Հայաստանի ճանաչելիության բարձրացում

101. Հայկական մշակույթի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված այլ գործողությունները կարող են ներառել.

1. Հայկական մշակույթի դիրքավորումը միջազգային կազմակերպություններին, ցանցերին, հարթակներին անդամակցության ընդլայնման միջոցով.

2. Միջազգային կինոշուկաներում հայկական կինոյի ներկայացվածության միջոցով (Կաննի կինոփառատոն և կինոշուկա, Վենետիկի Կինոփառատոն և կինոշուկա, Բեռլինի կինոփառատոն, Անսի փառատոն, Բուսանի կինոփառատոն, Օսկար և Asia Pacific Screen Awards մրցանակաբաշխություններ).
3. Առաջատար հայ նկարիչների, ստեղծագործական խմբերի և կազմակերպությունների գործունեության հանրահռչակում միջազգային մակարդակում ցուցահանդեսների, փառատոների, արվեստի բիենալեների (Վենետիկի, Մալթայի բիենալեներ, Պրահայի քվադրինալե) միջոցով.
4. Միջազգային երաժշտական փառատոներում (Օպերալիա, Եվրոպալիա) և մրցույթներում հայ դասական և ժամանակակից երաժշտարվեստի ներկայացում:
5. Հայոց պատմության, մշակույթի և արվեստի վերաբերյալ օտարալեզու հրատարակությունների տարածում արտերկրի հեղինակավոր գրադարանների, կրթական և մշակութային հաստատությունների և միջազգային գործընկերների շրջանում. մինչև 2027 թվական նախատեսվում է հրատարակել 35 անուն գիրք:
6. Նախարարության լիազորությունների շրջանակներում նպաստել տեղեկատվական հարթակներում (YouTube, Wikipedia, Wikimedia և այլն) Հայաստանի բարենպաստ նկարագրի ձևավորմանը:

5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

102. Ռազմավարությունը սահմանում է մշակույթի զարգացման տեսլականը և գերակայությունները ոլորտային երկու հիմնական ուղղությունների շրջանակում, որոնք պետական քաղաքականության ծրագրային հիմնական բաղադրիչներն են:

103. Այդ ուղղություններն ընդգրկում են մշակութային ժառանգության և ժամանակակից արվեստների ոլորտները, որոնց շրջանակում ըստ բնագավառների վերհանվել են հիմնախնդիրները, սահմանվել են զարգացման ոլորտային գերակա ուղղությունները և արդյունքային թիրախները:

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

104. Ռազմավարությունը զարգացման գերակա ուղղություն է սահմանել մշակութային ժառանգության պահպանության և անխաթար փոխանցման ապահովումը, որն իրականացվում է 5 հիմնական ոլորտների շրջանակում, որոնք ներկայացվում են ստորև.

1. **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ**

105. Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ կառավարության հաստատած պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում հաշվառված են ավելի քան 24000 հուշարձան՝ խմբավորված շուրջ 7300 տարածքային պահպանական միավորներում: Նորահայտ հուշարձանի կարգավիճակ ունեն ավելի քան 700 պատմամշակութային օբյեկտ:
106. Բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, անխաթար պահպանության, վերականգնման և օգտագործման գործում հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանը:
107. Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման բնագավառում ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով նախատեսված գործընթացները հնարավորություն կընձեռեն կատարելագործել պատմամշակութային հուշարձանների պահպանման մեխանիզմները, ընդլայնել շահառուների շրջանակը, բարձրացնել հասարակության պատասխանատվությունը, միջազգային կազմակերպությունների, անհատ բարերարների, համայնքի մասնակցությունն այդ գործընթացներում՝ խթանելով զբոսաշրջության զարգացմանը միտված հեռանկարային ծրագրերի մշակումը և իրականացումը, միաժամանակ կատարելագործելով բնագավառի փորձը՝ քայլելով ժամանակին և տնտեսական զարգացումներին համընթաց:
108. Ռազմավարությամբ որպես առաջնահերթություն է սահմանվել հնագիտական ժառանգությունը երկրի կայուն զարգացման գործընթացներում որպես տնտեսական ռեսուրսի դիտարկումը, Հայաստանի Հանրապետության տարածքի հնագիտական ժառանգության պահպանությունը, ենթակառուցվածքների զարգացումը և հանրահռչակումը:
109. Ռազմավարության մյուս առաջնահերթությունը **պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման ծավալների ավելացումն է** ինչպես պետական բյուջեի, այնպես էլ պետություն-մասնավոր համագործակցությամբ ներգրավված միջոցների հաշվին**:** Ընդ որում, վերջինիս շրջանակում կարևորվում են նաև այլ էթնոմշակութային խմբերի հավատալիքները, կրոնն ու մշակույթը բնորոշող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա պատմաճարտարապետական հուշարձանները՝ որպես Հայաստանի ընդհանուր պատմամշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս: Այս առաջնահերթությունը ևս դիտարկվում է որպես կայուն զարգացման տնտեսական ռեսուրս՝ ուղիղ ազդեցություն ունենալով զբոսաշրջության աճի և դրա հետևանքով ստացված ֆինանսական օգուտների համատեքստում:
110. Հուշարձանների վերականգնմանը պետական բյուջեից հատկացվող միջոցները 2022 թվականի նախորդ երկու տարիների համեմատ ավելացել է շուրջ 300 %-ով՝ կազմելով շուրջ 400 մլն ՀՀ դրամ: 2023 թվականին հատկացված է 660 մլն. ՀՀ դրամ, որը նախատեսվում է ընթացիկ վերաբաշխումների արդյունքում հասցնել 1 մլրդ. ՀՀ դրամ:

2027 թվականին պետական բյուջեից բնագավառին հատկացումները նախատեսվում է հասցնել առնվազն 2 մլրդ. ՀՀ դրամ:
111. Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում վերականգնման փուլում են գլխավորապես պաշտամունքային նշանակության ավելի քան 10 հուշարձաններ, մինչև 2027 թվական դրանց թիվը նախատեսվում է ավելացնել ևս 20-ով:
112. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման ցուցակներում, որպես ռազմավարական առաջնահերթություն, դիտարկվելու է ամրոցների և բերդերի ընդգրկումը՝ որպես պետականության խորհրդանիշներ՝ ապահովելով զբոսաշրջային երթուղիների բնույթի բազմազանությունը:
113. Հայաստանի Հանրապետության հուշարձանների զգալի մասն այսօր վտանգված է բնածին գործոնների քայքայիչ ազդեցության, տարածքի խիտ բնակեցման, տնտեսական գործունեության, հողօգտագործման և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված հուշարձանների տարածքները չեն արտահայտում հուշարձանների իրական քանակը: Այս համատեքստում ռազմավարությունն առաջնահերթություն է սահմանում նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման շրջանակում Հայաստանի անտառների թավուտներում թաքնված հուշարձանների գույքագրումը և հանրահռչակումը:
114. Ռազմավարությամբ և գործողությունների ծրագրի նպատակն է կատարելագործել բնագավառի իրավական դաշտը, կանոնակարգել բնագավառի կառավարման գործընթացում ներգրավված ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների գործառույթները և լիազորությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների լիարժեք և ամբողջական վերահսկողության գործընթացները, վտանգված և վնասված հուշարձանների վերականգնման, բարեկարգման աշխատանքները, կազմակերպել մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի օգտագործումը, ստեղծել պայմաններ ժամանակակից պահանջներով հնագիտական ժառանգության հետազոտությունների և հեռանկարային զարգացման համար, նպաստել միջազգային գիտական համագործակցության ընդլայնմանը:
115. Իրավական դաշտի կատարելագործումը նախատեսվում է իրականացնել փուլային տարբերակով՝ շեշտադրելով հուշարձանների պահպանության ոլորտում սեփականատերերի պատասխանատվության միջոցների խստացումը և հնագիտական ժառանգության ոլորտում գանձագողության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ներդնումը:
116. Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի պատմամշակութային հուշարձանների և հատկապես հնագիտական վայրերի պահպանությանը, վերականգնմանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, զբոսաշրջային երթուղիների մշակմանը, այդ երթուղիներում հնագիտական հուշարձանների

ընդգրկմանը, Հայաստանի զբոսաշրջային ակտիվ շրջանի երկարաձգմանը, զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին, ներգնա զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև մի շարք համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովմանը:

Գերակայություն 1. Պատմության և մշակույթի հուշարձաններ հանդիսացող քաղաքացիական, պետականության խորհրդանիշ հանդիսացող ճարտարապետական հուշարձանների (այդ թվում՝ ամրոցների և բերդերի) ամրակայում, նորոգում, վերականգնում և ենթակառուցվածքների ստեղծում

117. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա է շուրջ 700 ամրաշինական նշանակության հուշարձաններ, այդ թվում՝ ամրոցներ, բերդշեններ, աշտարակներ, միջնաբերդեր, պալատական համալիրներ, դղյակներ և այլն: 2022 թվական այս ուղղությամբ ընթացիկ աշխատանքներն ընդգրկել են 1 ամրոցի պարիսպների մասնակի վերականգնում, 6 քաղաքացիական, պետական նշանակության հուշարձանների կամ դրանց ենթահուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: 11 քաղաքացիական, պետական նշանակության հուշարձաններ ունեն արգելոց-թանգարանի կարգավիճակ, որից 5-ում ներդրված է տոմսային տնտեսություն: Մինչև 2027 թվական նախատեսվում է 30 հուշարձանի վերականգնում և 30-ի գիտանախագծային փաստաթղթերի մշակում, 4 նոր արգելոց-թանգարանի ստեղծում, 5 արգելոցներում տոմսային տնտեսության ներդրում:

118. Ռազմավարությամբ գերակա ուղղություն է սահմանվել ***քաղաքացիական, պետական նշանակության ճարտարապետական հուշարձանների***, այդ թվում՝ ամրոցների և բերդերի, պահպանությունը և հանրահռչակումը, որը կնպաստի զբոսաշրջային երթուղիների ընդլայնմանը և զբոսաշրջային ակտիվ շրջանի երկարաձգմանը, զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին և լրացուցիչ ֆինանսական հոսքերի ավելացմանը:

Նպատակներն են՝

1. Պատմության և մշակույթի հուշարձանների անխաթար պահպանությունը

2. Նոր ենթակառուցվածքների ստեղծմամբ ամրոցները և բերդերը զբոսաշրջային գրավիչ այցելավայրեր և զբոսաշրջային ուղղություններ դարձնելը, նոր արգելոցների ստեղծում և տոմսային քաղաքականության ներդնում, բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:

3. Հայաստանում ամրոցաշինության՝ որպես պետականության խորհրդանիշի ժառանգականության պահպանմանը և հանրահռչակմանը միտված ժամանակակից պահանջները բավարարող հետազոտությունների և հեռանկարային զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

4. սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, գործընթացներում բնակչության ներգրավվածության մեծացումը, աշխատատեղերի ստեղծումը,

5. պատմականորեն ձևավորված և մասնակի կորսված արհեստների, այդ թվում՝ զինարվեստի ավանդույթների վերածնունդը և փոխանցումը նոր սերնդին:

Իրականացվող քայլերը՝

1. Պատմության և մշակույթի հուշարձաններ հանդիսացող ամրոցների և բերդերի առանձին շտեմարանի ստեղծում և մշտադիտարկում,

2. Ամրոցների և բերդերի ուսումնասիրության, պահպանության, ամրակայման և վերականգնման, թանգարանացման, օգտագործման և հանրահռչակման համալիր միջոցառումների կանոնակարգում ու իրականացում, այդ թվում՝ ըստ պատմական նշանակության հուշարձանների բովանդակության վերականգնում և տարածում, հուշարձանների թանգարանացում, ենթակառուցվածքների ստեղծում,

3. Նշյալ հուշարձանների վերաբերյալ համապարփակ վերականգնողական ծրագրերի իրականացում՝ համագործակցելով այլ գերատեսչությունների և շահագրգիռ կազմակերպությունների հետ, մասնավորաբար ենթակառուցվածքների ստեղծման շրջանակում (մոտեցման ճանապարհների հիմնանորոգում, ինժեներական գծերի անցկացում, լուսավորություն և այլն)

4. Ամրոցաշինությանն առնչվող գիտական ուսումնասիրությունների, հոդվածների պարբերական հրապարակում համաշխարհային վարկանիշային հանդեսներում և հանրահռչակում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Ամրոցների ու բերդերի, դրանց պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառում զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:

2. Ամրոցների և բերդերի պահպանության և կառավարման արդիականացում՝ սահմանելով տնտեսական զարգացման առաջնահերթությունները, համալիր մոտեցում ցուցաբերելով բնության, պատմական միջավայրի, մշակութային ժառանգության, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման խնդիրներին:

3. Միջազգային ասպարեզում Հայաստանի ճանաչելիության բարձրացում, ամրոցների և բերդերի պատմաճարտարապետական ժառանգության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, նշյալ վայրերից հնագիտական գտածոների վերականգնում և պարտադիր թանգարանացում:

4. Պետության պահպանության ներքո գտնվող պատմական ամրոցների և բերդերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, հասարակության ինքնաճանաչողության և իրավագիտակցության բարձրացում:

5. Վերականգնված և պատշաճ պահպանվող հուշարձանների թվի ավելացում:

2. **Թանգարաններ**

119. Հանրապետությունում գործում է 133-ից ավելի թանգարան (թիվը շարունակաբար ավելանում է), որից 65-ը՝ պետական: Դրանցից 54-ը (ներառյալ՝ արգելոց-թանգարանները, մասնաճյուղ-թանգարանները) գործում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության, 3-ը՝ այլ նախարարությունների, 8-ը՝ մարզպետարանների ենթակայությամբ:

120. 25 թանգարան գործում է համայնքների ենթակայությամբ, որից 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի: 22 թանգարան պատկանում է հասարակական կազմակերպություններին և մասնավոր անձանց, 6-ը՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն: Պետական մշակութային և ուսումնական այլ հաստատությունների ներքո գործում է 14 թանգարան:

121. ՀՀ թանգարանային հավաքածուն ընդգրկում է ավելի քան 2 միլիոն թանգարանային առարկա:

122. Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է թանգարանային հավաքածուների պահպանությունը և շարունակական հանրայնացումը, թանգարանի՝ որպես սոցիալ-կրթական ինստիտուտի կայացումը, հասարակության բոլոր սոցիալական շերտերի և տարիքային խմբերի, հատկապես՝ երեխաների և պատանիների ոչ ֆորմալ կրթության ապահովումը:

Գերակայություն 2. **Թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացում, թանգարանային տարածքների արդիականացում և ազգային ֆոնդի առավելագույն հանրահռչակում**

Նպատակներն են՝

1. Թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացում:

2. Թանգարանների շենքային պայմանների բարելավում, միջազգային չափանիշ-ներին համապատասխանեցում, ցուցադրական մակերեսների ընդլայնում, հավաքածուների պահոցների բարելավում, տեխնիկական վերազինում և արդիականացում, թեմատիկ նոր թանգարանների ստեղծում:

3. Թանգարանների գիտակրթական գործունեության խթանում:

4. Հայկական մշակութային ժառանգության հանրահռչակում:

Իրականացվող քայլերը՝

1. Թանգարանների բնագավառը կանոնակարգող օրենսդրական դաշտի ստեղծում ու կատարելագործում, օրենսդրական մեխանիզմների և գործիքակազմերի ներդնում:

2. Թանգարանների կառավարման նոր մոդելի ներդնում:

3. Ցուցադրական և ֆոնդային տարածքների արդիականացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում և նյութատեխնիկական բազայի թարմացում:

4. Թանգարաններում գիտակրթական բաղադրիչի ընդլայնում, այդ թվում՝ հայկական պատմամշակութային ժառանգությանը նվիրված ցուցադրությունների, կրթական ծրագրերի և միջազգային գիտաժողովների կազմակերպում, հրատարակություններ և մեդիա նախագծերի իրականացում միջմշակութային փոխառնչությունների և միջմշակութային երկխոսության համատեքստում:

5. Նոր թանգարանների հայեցակարգերի մշակում:

6. Թանգարանների էլեկտրոնային միասնական տոմսային համակարգի ներդնում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Թանգարանային գործի բնագավառում համապատասխան օրենքի առկայություն և ոլորտի իրավահարաբերությունների կարգավորում, թանգարանային գործունեության կանոնակարգում:

2. **Թանգարանների զարգացման և կառավարման ինստիտուցիոնալ միավորի ստեղծում**, որի հիմնական նպատակն է թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացումը: Նոր մոդելով առաջարկվում է ստեղծել Մշակույթի զարգացման հիմնադրամ, որի կողմից կիրականացվեն թանգարանների կառավարման և առաջխաղացման, մասնավորապես կազմակերպատնտեսական, անձնակազմի կառավարման, ֆինանսական և հանրահռչակման գործառույթները, ընդ որում ծառայությունների զգալի մասը նախատեսվում է մրցութային ընթացակարգով արտապատվիրակել մասնավոր ընկերություններին:

Կառավարման նոր մոդելը հնարավորություն կտա իրականացնել թանգարանների կառավարչատնտեսական համակարգված կառավարում մեկ կենտրոնից, վարել ֆինանսական և անձնակազմի ներգրավման ճկուն քաղաքականություն, միաժամանակ նպաստելով տնօրենների և մասնագիտական ներուժի գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ իրականացմանը և թանգարանների գիտակրթական գործունեության զարգացմանը: Թանգարանների կողմից ոչ բովանդակային լիազորությունների փուլային արտապատվիարկումը Հիմնադրամին նպատակ ունի բարձրացնելու թանգարանների ճանաչելիությունը, ինչպես նաև ներգրավելու հավելյալ ֆինանսական միջոցներ, որոնք պետք է ուղղվեն նույն թանգարանների ֆոնդերի հարստացմանը, նոր ժամանակակից ցուցադրությունների կազմակերպմանը, ինչպես նաև արտերկրից համաշխարհային համբավ ունեցող թանգարանների հետ համագործակցության ընդլայնմանը և Հայաստանում ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպմանը:

Հիմնադրամի ծրագիրը հաջողությամբ իրականացնելու դեպքում՝ դիտարկվում է այն կիրառել թատերահամերգային կազմակերպությունների շրջանակում:

3. Բարելավված շենքային պայմաններ, արդիականացված մշտական ցուցադրություններ, մշակութային ժառանգության ուսումնասիրման, հետազոտման, փորձաքննությունների իրականացման, վերականգնման, ամրակայման պատշաճ և որակյալ կազմակերպման համար համապատասխան լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծում:

4. Բացառիկ ճարտարապետական լուծումներով նոր թեմատիկ ցուցադրություններ: Վերջին 5 տարիների ընթացքում հանրապետությունում բացվել է 3 նոր թանգարան, որոնցից մեկը գործում է որպես մասնաճյուղ (Հայաստանի ազգային պատկերասրահի Զաքար Զաքարյանի և Արտաշես Հովսեփյանի տուն-թանգարան մասնաճյուղ), իսկ երկուսը համայնքային ենթակայության առանձին թանգարաններ են (Համո Սահյանի, Սերո Խանզադյանի տուն-թանգարաններ): Նախատեսվում է առաջիկա 5 տարիներին ստեղծել ևս 2 նոր թանգարան, որոնցից մեկը կլինի Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ, իսկ մյուսը կգործի որպես առանձին թանգարան (Գորգի թանգարան-ինստիտուտ):

Գորգի թանգարան-ինստիտուտի ստեղծման հարցը ռազմավարական առաջնահերթություն է դարձել Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո: Այս կառույցը գիտական հիմնավոր փաստերի և վերլուծությունների միջոցով կպայքարի հայկական գորգագործական մշակույթի յուրացումների դեմ, միևնույն ժամանակ կապահովի համաշխարհային գորգարվեստում հայկական գորգագործական մշակույթի պատշաճ ներկայացումն ու նրա բացառիկ դերի ամրագրումը: Թանգարան-

ինստիտուտը կխթանի գորգագետների նոր սերնդի կրթումը և նրանց միջոցով միջազգային հարթակներում հայկական գորգի մշակույթի պատշաճ հանրահռչակումը:

5. Թանգարանների՝ որպես ոչ ֆորմալ կրթական տարածքների կայացում: Վերջին տարիներին թանգարանները զգալիորեն ընդլայնել են կրթական գործունեությունը՝ առաջարկելով բազմաբովանդակ ծրագրեր տարիքային, սոցիալական խմբերի համար: 2022 թվականի կրթական գործունեության շրջանակում թանգարանները հյուրընկալել են ավելի քան 245 000 աշակերտների (ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների շուրջ 60 %-ը), որից 210 000-ը՝ «Բաժանորդային համակարգի», իսկ 33 000-ը՝ այլ ծրագրերի շրջանակում:

6. ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրում որպես առանձին դրույթ հաստատվել է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը, ժառանգության թվայնացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ինքնաշխատ համակարգերի շարունակական զարգացումը: Վերոնշյալի շրջանակում կարևորվում է նախարարության ենթակայության թանգարաններում էլեկտրոնային տոմսային միասնական համակարգի ստեղծումը և ներդնումը, որը հնարավորություն կտա ապահովել ցուցադրությունների թանգարանային այցելությունների համակարգված կազմակերպում, տոմսային տնտեսության և ֆինանսական հոսքերի կառավարման ժամանակակից գործիքակազմի ներդնում, թափանցիկության ապահովում, ինչպես նաև թանգարանային ցուցադրությունների արդիականացումը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման խթանումը:

3. Ոչ նյութական մշակութային ժառանգություն

123. Ոլորտի պետական քաղաքականությունը ուղղված է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանն ու հանրայնացմանը, հանրության իրազեկվածությանը, ժառանգության պահպանման գործընթացներում ներգրավմանը, ժառանգության ճանաչելիության բարձրացմանը, տեղի ու դերի արժևորմանը՝ երկրի կայուն զարգացման նպատակների իրագործման համատեքստում:

2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմի հետևանքով Հայաստանի Հանրապետություն է բռնի տեղահանվել 106 625 անձ, որոնք բնակեցվել են Հայաստանի տարբեր մարզերում և հարյուրավոր բնակավայրերում: Ընդհատվել է այդ անձանց ժառանգության կենսունակության՝ բուն տարածքում դրա պահպանության, վերարտադրման և փոխանցման շղթան: Որպես առաջնահերթություն կարևորվում է բռնի տեղահանվածների ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների գույքագրման գործընթացի կազմակերպումը, որը հնարավորություն կտա քարտեզագրելու տեղահանվածների

մշակութային կենսագործունեության «տարածքները» և ձևերը, ապահովելու այդ կենսագործունեության 3 կարևոր սկզբունքները և դրանից բխող գործընթացները՝ մասնակցություն, ժառանգության կենսունակության իրացում և փոխանցում:

Գերակայություն 3. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն և փոխանցում, ճանաչելիության բարձրացում, տեղի ու դերի արժևորում երկրի կայուն զարգացման նպատակների իրագործման համատեքստում, հանրության ներգրավում, իրազեկվածություն, հանրայնացում:

124. Ռազմավարությամբ նախատեսվում են ՀՀ համայնքներում տեղական ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և փոխանցման ուղղությամբ կրթամշակութային ծրագրերի իրականացում, «Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի» ստեղծում, ոլորտի միջազգային ցանցային և ինստիտուցիոնալ համագործակցության միջոցով հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակում:

Նպատակները՝

1. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն, իրազեկում, արժևորում, համայնքների, խմբերի և անհատների մասնակցության ապահովում.
2. Ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակ ձևերի՝ որպես միանգամայն ժամանակակից, առաջադեմ և անհրաժեշտ մշակութային երևույթների կիրառելիության և հանրայնացման ապահովում.
3. Ավանդական արհեստների կենսունակության, փոխանցման և կիրառման ձևերի ընդլայնման ապահովում:

Իրականացվող քայլերը՝

1. «Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի» ստեղծում.
2. ՀՀ համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և փոխանցման ուղղությամբ կրթամշակութային ներառական ծրագրերի իրականացում, արդի տեղեկատվական տեխնոլոգիաների և բազմաբնույթ ծրագրերի իրականացման միջոցով հանրության իրազեկվածության բարձրացում.
3. Միջազգային համագործակցություն և հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակում:
4. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործընթացներում ՀՀ համայնքների, ժառանգությունը կրող խմբերի, անհատների, հասարակական և մշակութային կազմակերպությունների ներգրավվածության ընդլայնում՝ սոցիալական, էթնիկ, տարիքային խմբերի ներուժի կիրառմամբ:

Տարեկան մոտ 15 ծրագիր է իրականացվում՝ ուղղված Հայաստանի ժողովրդական մշակույթի պահպանությանը, փոխանցմանը և տարածմանը: Դրանց աշխարհագրական ընդգրկումը բավական լայն է՝ ՀՀ 10 մարզերի 40-ից ավելի համայնքներ, շահառուների թիվը՝ շուրջ 2000: Ծրագրերը բնորոշվում են ներառականությամբ՝ դժվարին կացության մեջ գտնվող երեխաներ ու պատանիներ, արցախահայեր, սիրիահայեր, տարբեր տարիքային խմբեր՝ երիտասարդներ և տարեցներ, կանանց ընդգրկվածություն ժառանգության պահպանության գործընթացներում: Նախատեսվում է ընդլայնել համայնքների և շահառուների թիվը:

2. ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գույքագրման գործընթացի արդյունավետություն, ավանդական արհեստների կենսունակության աշխուժացում, համայնքների, խմբերի և անհատների մասնակցայնության և ստեղծագործականության խթանում: Ներկայում ՀՀ 3 պետական ցանկերում գրանցված են 72 հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներ, գործընթացը շարունակական է և հիմնված է ՀՀ համայնքների, ստեղծագործական խմբերի և անհատների առաջարկների վրա:

3. Հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակման միջոցով Հայաստանի ճանաչելիության բարձրացում՝ ի նպաստ երկրի կայուն զարգացման և տնտեսական առաջընթացի: Ոլորտի միջազգային հանրահռչակումը իրականցվում է միջազգային տարբեր միջոցառումներին մասնակցությամբ, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ ներկայացվող հայտերի գրանցմամբ: Ներկայում գրանցված են 7 հայտեր և 1 ֆինանսական աջակցության ծրագիր, նախատեսվում է գրանցված հայտերի թիվը հասցնել 9-ի:

4. Գրադարաններ

125. Հայաստանի Հանրապետությունում գործում է 530 գրադարան, որից 12-ը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, իսկ 510-ը՝ համայնքային ենթակայության (Հիմք՝ ՀՀ ազգային վիճակագրական վարչությունից ստացված վերջին տեղեկատվությունը):

126. Ոլորտի նպատակն է գրադարանային հավաքածուների պահպանությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմա-տացված համակարգերի շարունակական զարգացումը, համալրման անընդհատության ու գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը,

մատենագիտության, կենսամատենագիտության, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմումն ու հրապարակումը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, գրադարանների հավասարաչափ բաշխվածության և զարգացվածության ապահովումը, գրադարանների շուրջ համայնքային մշակութային կյանքի կազմակերպման հայեցակարգերի մշակումը:

Գերակայություն 4. Գրավոր ժառանգության պահպանություն, թվայնացման շարունակականության, թվային շտեմարանների հասանելիություն և մատչելիություն, գրադարանային ոլորտի համաչափ զարգացում

127. Ռազմավարությամբ նախատեսվում է գրավոր ժառանգության պահպանություն և հանրահռչակում, ընթերցանության խթանում, բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում, մարզերում մշակութային համաչափ զարգացման համատեքստում համայնքային գրադարանային միավորումների ստեղծում՝ գրադարանային ծառայությունների մատուցում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

128. Կարևոր է համայնքային գրադարանների շենքային պայմանների բարելավումը կամ նոր շենքերի կառուցումը, որի հիմքում գրադարաններին ներկայացվող շենքային պահանջները մոտավորապես նույնը պետք է լինեն, անկախ նրանից՝ դրանք փոքր շինության մեջ են, թե տեղաբաշխված են մեծ շինության մի հատվածում: Դրանք պետք է լինեն նոր, տիպային հատուկ մասնագիտացված գրադարանային շենքեր՝ համալրված նյութատեխնիկական բազայով, ինչը կնպաստի համայնքների մշակութային և տնտեսական կյանքի զարգացմանը: Առաջիկա 5 տարիներին նախատեսվում է համայնքային գրադարանների զարգացման հայեցակարգերի մշակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրադարանը հասարակության զարգացման և ինքնակրթման կենսական անհրաժեշտության վայր է և համայնքներում պետք է դառնա շարունակական կրթության, երկխոսության կարևոր հարթակ, հնարավորություն կընձեռի տեղեկատվությունը ստանալ որպես գիտելիք: Գրադարանները կդիտարկվեն մշակութային կյանքին հասարակության ակտիվ մասնակցությունն ապահովելու, հայկական և համաշխարհային մշակութային քաղաքականության հիմնական ուղենիշներին ծանոթացնելու կարևոր օղակներ:

129. Ընթերցողների գրադարանային-մատենագիտական պահանջների բավարարումը, Հանրապետությունում տեղեկատվական, մշակութային, կրթական, գիտական գործունեությանը նպաստելը մտավոր ներուժի ձևավորման և զարգացման ապահովումը, սպասարկման ոլորտի կատարելագործումը և մատչելիության ապահովումը դառնում են այն կարևոր գործոնները, որոնց միտված է լինելու գրադարանային գործի հետագա զարգացման ընթացքը:

Նպատակները՝

1. Գրավոր ժառանգության երկարատև պահպանում:
2. Ընթերցանության խթանում:
3. Գրադարանների հավասարաչափ բաշխվածություն և զարգացվածություն:
4. Գրադարանների շուրջ համայնքային մշակութային կյանքի կազմակերպման հայեցակարգերի մշակում:

Իրականացվող քայլերը՝

1. ՀՀ ԿԳՄՍՆ գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրերի մշակում, մեխանիզմների ներդնում:
2. Ձեռագրական, գրքային և արխիվային հավաքածուների հասանելիության լիարժեք ապահովման նպատակով արհեստական բանականության գործիքակազմի կիրառմամբ որոնողական համակարգերի կատարելագործում:
3. Համայնքային գրադարանների գրքային հավաքածուների գույքագրում և հաշվառում:
4. Գրադարաններում նյութատեխնիկական բազայի ապահովում, թվայնացնող սարքավորումների ձեռքբերում, տեխնիկական վերազինում:
5. Մարզերում մշակութային համաչափ զարգացման նպատակով համայնքային գրադարանային միավորումների ստեղծում:
6. Ժամանակակից հանրային գրադարանային շենքերին ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ նոր հայեցակարգի մշակում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Գրադարանների էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն և մատչելիություն:
2. Գրադարանների շենքային պայմանների բարելավում և սպասարկման ձևերի արդիականացում, էլեկտրոնային սպասարկման և միասնական ընթերցողական տոմսի ներդնում Հայաստանի Հանրապետությունում:
3. Համայնքային և պետական գրադարանների համաչափ զարգացում:
4. Մարզային մշակութային համաչափ զարգացման համատեքստում համայնքային գրադարանային միավորումների ստեղծում:
5. Գրադարանային ծառայությունների մատուցման ապահովում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
6. Թվայնացված գրականության տվյալների շտեմարանի համալրում, գրավոր ժառանգության թվայնացում ու շտեմարաններում մուտքագրում:

5. Գրահրատարակչություն

130. Գրահրատարակչության ոլորտում իրականացվող ծրագրերը միտված են գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացմանը (գրող – քննադատ

- գրական գործակալ - հրատարակիչ – գրավաճառ - ընթերցող), գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանը, տարածմանը և հանրահռչակմանը, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրմանն ու զարգացմանը, գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, աշխարհի կարևորագույն գրադարանների համալրմանը հայկական մշակույթը ներկայացնող օտարալեզու գրականությամբ:

Գերակայություն 5. Հայ գրականության հանրահռչակում, ընթերցանության խթանում

131. Պետական քաղաքականությունն ամրագրում է, որ սպառողական և հրատարակչական նախընտրություններից դուրս մնացող գրականությունը, գրական նախագծերը, նշանակալի, մնայուն և հանրօգուտ աշխատանքները, անկախ մշակութային գործիչները պետք է տեղ գտնեն գրական դաշտում:

Նպատակները՝

1. հայ դասական և ժամանակակից գրականության հանրահռչակում Հայաստանում և արտերկրում,
2. ընթերցանության խթանում,
3. ստեղծագործական կարողությունների զարգացում,
4. բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում,
5. գրող – քննադատ - մամուլ - գրական գործակալ - հրատարակիչ – գրավաճառ - ընթերցող շղթայի ամրացում,
6. գրատարածման բնագավառում միջազգային համագործակցություն,
7. աշխարհի կարևորագույն գրադարանների համալրում հայկական մշակույթը ներկայացնող օտարալեզու գրականությամբ,
7. գրահրատարակչության ոլորտում կրթություն:

Իրականացվող քայլերը՝

1. գեղարվեստական գրականության թարգմանիչների վերապատրաստում,
2. գրական գործակալի ինստիտուտի կայացման համար կրթական ծրագրերի իրականացում,
3. գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի ակտիվ մասնակցություն,

4. հայ գրականությունը թարգմանաբար հրատարակելու համար արտերկրի հրատարակիչներին աջակցություն,

5. գրամշակութային մամուլում քննադատական մտքի զարգացման համար հոնորարային ֆոնդի տրամադրում,

6. ստեղծագործական կարողությունների զարգացման համար հրապարակման հարթակներին աջակցություն,

7. միջազգային սեմինարների, վարպետության դասերի, բանախոսությունների, փոխանակման ծրագրերի իրականացում,

8. ընթերցանությունը խթանող հանրապետական ծրագրերի իրականացում,

9. մինչև 19-րդ դարի վերջը ստեղծված, սակայն մինչ օրս բնագրից հայերեն չթարգմանված կարևոր երկերի թարգմանություններին աջակցություն,

10. ստեղծագրության և գրամշակութային հետազոտությունների համար դրամաշնորհների տրամադրում

11. տեսողության սահմանափակ կարողություն ունեցող անձանց համար ծրագրերի իրականացում՝ բրայլյան տառատեսակով գրքերի հրատարակման և այլնի միջոցով,

12. աշխարհի կարևորագույն գրադարանների համալրման նպատակով հայկական մշակույթը ներկայացնող օտարալեզու գրականության հրատարակում,

13. Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերականներին աջակցություն:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. արտերկրում օտար լեզուներով հայ դասական և ժամանակակից գրականության հրատարակում, հանրայնացում (2022 թվական դրությամբ «Հայ գրականությունը թարգմանություններում» ծրագրով արտերկրում հրատարակվել է 50 անուն գիրք, 2027 թվական դրությամբ կունենանք 125 գիրք)

2. Հայաստանում գրական գործակալի ինստիտուտի կայացում, գրողների համար բազմակարծության ամբիոնների ստեղծում (2023-2027 թվականների Գրքի երևանյան փառատոնի շարունակականություն և ընդլայնում, 2027 թվական փառատոնին կմասնակցեն 20 000 ընթերցողներ, 200 գրողներ, 50 հրատարակչություններ, ոլորտի 300 այլ մասնագետներ),

3. Հայաստանում հրատարակված գրքերի, գրադարաններում ընթերցանության, գրախանութներում գրքերի վաճառքի ցուցանիշների աճ (2021 թվականի դրությամբ

Հայաստանում տարեկան հրատարակվում է շուրջ 2400 անուն գիրք, 2027 թվականին տարեկան կունենանք շուրջ 2800 անուն գիրք),

4. գրատարածման բնագավառում միջազգային զարգացող համագործակցություն (2022-2027 թվականների Հայաստանն առանձին տաղավարով կմասնակցի 10 գրքի միջազգային ցուցահանդեսի),

5. մեդիագրագիտության բարձրացում,

6. սպառողական կամ հրատարակչական նախընտրությունների շրջանակից դուրս մնացող գրականության, գրական նախագծերի, անկախ մշակութային գործիչների ներգրավում գրական դաշտ, նշանակալի, մնայուն և հանրօգուտ աշխատանքների ստեղծում (2022-2027 թվականների ընթացքում աջակցություն կստանան շուրջ 150 գրողներ, մշակույթի ոլորտը հետազոտողներ և թարգմանիչներ),

7. տեսողության սահմանափակ կարողություններով անձանց համար գրավոր ժառանգությանը հաղորդակցվելու մատչելիության ապահովում (2022-2027 թվականների Բրայլյան տառատեսակով լույս կտեսնի 461 640 թերթ գիրք և ամսագիր, կձայնագրվի 900 ժամ աուդիոգիրք),

8. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդույթների պահպանման և տարածման համար պայմանների ստեղծում (2022-2027 թվականների ընթացքում աջակցություն կստանան Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերականների 50 նախագծեր),

9. մշակութային բովանդակության փոխներթափանցումների ապահովում, գրական տեքստի որակի բարձրացում (2022-2027 թվականների ընթացքում աջակցություն կստանան գրական և մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականների 100 նախագծեր),

10. աշխարհի կարևորագույն գրադարանների գրքային հավաքածուներում հայկական մշակույթը ներկայացնող օտարալեզու գրականության առկայություն (2022-2027 թվականների արտերկրի 500 բուհական, հանրային, մշակութային գրադարաններ կհամալրվեն հայոց պատմությունը և մշակութային ժառանգությունը ներկայացնող 35 անուն գրքով՝ ընդհանուր 17500 տպաքանակով) :

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐ

132. Մշակութային և ստեղծարար ոլորտն (ժամանակակից արվեստ) իր մեջ ընդգրկում է երաժշտարվեստը, պարարվեստը, թատերարվեստը, կինոարվեստը, կերպարվեստը և գեղարվեստական կրթությունը: Ոլորտի պետական քաղաքականությունն ուղղված է վերոնշյալ ուղղությունների հանրայնացմանն ու զարգացմանը: Անցկացվող բարեփոխումները (նյութատեխնիկական բազայի արդիականացում, կազմակերպվող միջազգային փառատոների և այլ մասշտաբային ծրագրերի որակն ու հնչեղությունը) նպաստել են տարածաշրջանում Հայաստանի վարկանիշի բարձրացմանը: Միաժամանակ, այդ փոփոխությունները հանգեցրել են վերջիններիս տեղի ու դերակատարության արժևորմանը, երկրի կայուն զարգացման գործում նրա առավել ինտեգրմանը:

133. Ոլորտին պետական բյուջեից հատկացվող միջոցները 2022 թվականին կազմել է 16,5 մլրդ դրամ, որը 2019 թվականի համեմատ ավելացել է 2,5 անգամ: Հատկացված միջոցների 80%-ը կազմել են կապիտալ ծախսերը: 2023 թվականին նախորդ երեք տարիների համեմատ **2,5** անգամ ավելացել է նաև «Արվեստների ծրագրով» հատկացվող ֆինանսավորման չափը՝ 606489.39 հազ. ՀՀ դրամից հասնելով **1,6 մլրդ** ՀՀ դրամի: 2025 թվականին պետական բյուջեից նշյալ ծրագրի հատկացումները նախատեսվում է հասցնել առնվազն **2,5** մլրդ. ՀՀ դրամ:

134. Առանձնակի կարևորվել է ինքնազբաղ արվեստագետների ներգրավվածությունը պետական ծրագրերին, որն իրականացնելու նպատակով մշակվել և 2022 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է «Միջազգային միջոցառումներին և նախագծերին մասնակցելու համար անհատ կատարողներին, ստեղծագործողներին, արվեստի և մշակույթի գործիչներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված նպաստ տրամադրելու կարգը»:

135. Պետական ծրագրերի և պետության կողմից ֆինանսավորման թափանցիկությունը ապահովվում է նաև մրցութային դրամաշնորհների միջոցով, որը 2021 թվականին և 2022 թվականին կազմել է **400** մլն դրամ: Դրամաշնորհային ծրագրից օգտվող շահառուների թիվը **47** կազմակերպությունից (2019 թվական) հասել է **65-ի** (2022 թվական): Հաշվի առնելով կազմակերպությունների հետաքրքրությունն ու ակտիվությունը, նախատեսվում է 2025 թվականին **2** անգամ ավելացնել ֆինանսավորման չափը, քանի որ ակնկալվում է ծրագրի մասնակիցների **3**-ակի աճ:

Երաժշտարվեստի ոլորտ

136. Ժանրային բոլոր ուղղությունների (սիմֆոնիկ, կամերային, ժողովրդական, երգչախմբային արվեստ) զարգացման, ստեղծագործական խմբերի բնականոն

գործունեության ապահովման նպատակով վերջին տարիներին ստեղծվել են նպաստավոր պայմաններ, ինչի շնորհիվ արձանագրվել են շոշափելի հաջողություններ:

137. Երաժշտարվեստի զարգացմանը մեծապես նպաստում են Հայաստանում կազմակերպվող ավելի քան 1 տասնյակ միջազգային երաժշտական փառատոներն ու մրցույթները, արտերկրից ժամանած անվանի երաժիշտների հետ համատեղ համերգները, հայաստանյան կոլեկտիվների և ինքնազբաղ արվեստագետների մասնակցությունը արտերկրի միջազգային մրցույթներին և փառատոներին:

Թատերարվեստի ոլորտ

138. Ապահովվել է հայ և համաշխարհային դասական ու ժամանակակից դրամատուրգների պիեսների բեմադրությունների, ինչպես նաև երիտասարդ ռեժիսորների մասնագիտական կայացման, ստեղծագործական նոր ծրագրերի իրականացման գործընթացը: Հանրապետությունում գործող **15** պետական թատրոններում (որոնցից 2-ը մարզային ենթակայության) տարեկան ներկայացվում է շուրջ **1400** ներկայացում**,** որից **40-ը՝** նոր բեմադրություններ են: Առանցքային դերակատարություն ունեն Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը և Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը:

139. Թատերական նախագծերի պետական աջակցությունն իրականացվում է՝ նկատի ունենալով ոլորտի ստեղծագործական զարգացման համամասնությունը և ընդգրկվածությունը (երիտասարդական, հոբելյանական, հայ դասական և ժամանակակից դրամատուրգիա, մարզային թատրոններ):

140. Առաջնահերթությունը տրվում է ինչպես ավանդական արժեքների և ազգային դպրոցի պահպանմանը, այնպես էլ նորարարական–փորձարարական ձևաչափերի կիրառմանը: Այս նպատակով կարևորվում է նոր հարթակների[6] ձևավորումը, մասնագիտական նոր հմտությունների ձեռքբերումը:

141. Թատերարվեստի ոլորտի զարգացումն ու միջազգայնացումը իրականացվում է միջազգային փառատոների, վարպետության դասերի, համատեղ թատերական նախագծերի իրականացման միջոցով: Միջազգային համագործակցության ապահովման համար կարևորվում են թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի արդիականացումը: Ավանդական փառատոներին զուգահեռ կարևորվում է նոր նախագծերի իրականացումը:

[6] «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների և «Լոֆթ» ինքնազարգացման և ժամանցի կենտրոնների մարզային մասնաճյուղերի ստեղծում, Artbox ինկուբատոր, Արվեստի բաց հարթակ, ֆիլֆորում և այլ:

Կինոարվեստի ոլորտ

142. Կինոարտադրության աջակցության, Հայաստանում և միջազգային ասպարեզում հայրենական կինոարտադրանքի ներկայացման, հայկական կինոժառանգության պահպանման, վերականգնման ու հանրահռչակման գործառույթներն իրականացվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության 1 ՊՈԱԿ-ի («Հայաստանի ազգային կինոկենտրոն») և մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով:

143. Կինոարվեստի ոլորտում իրականացվող գործընթացները միտված են խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրության աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի հանրահռչակմանը, տարածմանը, մատչելիության ապահովմանը, հայկական կինոյի ավանդույթների շարունակականության ապահովմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, որոնց արդյունավետ իրականացման արդյունքում կզարգանա կինոարտադրությունը, կտարածվի հայկական կինոարտադրանքը, կբարելավվի հասարակության կինոհաղորդակցության մակարդակը:

144. 2021-2022 թվականների նկարահանվել են **22** խաղարկային, **8** վավերագրական, **10** մուլտիպլիկացիոն կինոնկար: Ապահովվել է հայկական արտադրության **22** ֆիլմի և կինոնախագծի մասնակցություն **63** միջազգային կինոփառատոների և կինոշուկաներին**, 12** ֆիլմ արժանացել է տարբեր մրցանակների, իսկ «Ավրորայի լուսաբացը» ֆիլմը 2023թ. Asia Pacific Screen Awards մրցանակաբաշխությունում նույն ֆիլմը հաղթող է ճանաչվել «լավագույն անիմացիոն ֆիլմ» անվանակարգում: Աջակցություն է ցուցաբերվել Հայաստանում կազմակերպված **7**, որոնց թվում «Ոսկե ծիրան» կինոփառատոնին: 19 տարիների ընթացքում փառատոնը ընդլայնել է ոչ միայն իր մասնակից երկրների աշխարհագրությունը, այլև այցելուների և ներկայացվող ֆիլմերի քանակը[7]: Որպես առաջնահերթություն է սահմանվել մեծ հեղինակություն վայելող փառատոնը վերածել տարածաշրջանում կինոլորտի զարգացումը խթանող և համատեղ կինոարտադրությանը նպաստող փառատոնի:

145. Անդամակցությունը կինոարտադրության երկու հեղինակավոր կազմակերպություններին՝ «Եվրիմաժ»-ին և «Եվրոպական աուդիովիզուալ Օբսերվատորիա»-ին, մեծապես նպաստեց համատեղ և համաֆինանսավորվող ֆիլմերի արտադրությանը, դրանց ներկայացմանը մի շարք հեղինակավոր կինոշուկաներում և այլն:

---

[7] 2022 թվականի փառատոնին ներկայացվել է 100 ֆիլմ, որին արտերկրից ժամանել էր 130 անվանի ռեժիսոր, սցենարիստ, քննադատ, դերասան: Մասնակից երկրներն էին Եգիպտոսը, Հունաստանը, Վրաստանը, Ռուսաստանը, Իրանը, ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա, Չինաստան, Բելգիա, Ավստրիա և այլն:

146. Այդուհանդերձ, ոլորտը բարեփոխումների կարիք ունի, որոնցից առաջինը կինոոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կանոնակարգումն է, համատեղ ֆիլմերի արտադրության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, հայկական կինոարտադրանքի միջազգայնացման, կինովարձույթի ընդլայնման, մասնագիտական կադրերի վերապատրաստմանն ուղղված միջոցառումներն են: Հրատապ է հայկական կինոժառանգության պահպանության խնդիրը՝ ֆիլմերի թվայնացման ու հանրայնացման միջոցով:

Պարարվեստի ոլորտ

147. Պետական քաղաքականությունը նպատակաուղղվել է ոլորտի կազմակերպությունների օպտիմալացմանը և համաչափ զարգացմանը, որն իր հերթին նպաստելու է ֆինանսական միջոցների և մասնագիտական ռեսուրսների կենտրոնացմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը, ոլորտի կազմակերպություններում մարկետինգի և կառավարման կարողությունների զարգացմանը:

148. Ոլորտում գործող **3** պետական համույթների (Հայաստանի պարի պետական անսամբլը, Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթը և Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթը) կողմից տարեկան իրականացնում էին շուրջ **5** պարային նոր բեմադրություն: Մասնագիտական կարողությունների զարգացման և հայ պարարվեստը արտերկրում ներկայացնելու նպատակով կարևորվում հայաստանյան պարային կոլեկտիվների մասնակցությունը միջազգային փառատոների:

149. Առանձնակի կարևորություն է տրվում ժամանակակից պարի կայացմանը և հայկական բալետային դպրոցի սերնդափոխության ապահովմանը:

150. Այդուհանդերձ ոլորտում առկա են հիմնախնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Մասնավորապես՝ նվագացանկի և երգացանկի անորոշությունը, ժողովրդական տարազների, գեղարվեստական չափանիշների մշակումը, գեղարվեստական ճաշակի ձևավորումը, մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավումը, գեղարվեստական բարձրարժեք արդյունքի (գույքի) ապահովումը (լուսաձայնային տեխնիկա, երաժշտական գործիքներ, բեմական հանդերձ, դահլիճների և բեմերի կահավորում, ջեռուցման, անվտանգային համակարգեր): Բարեփոխումներ ընթանում են կադրային և ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման ուղղությամբ:

151. Բարեփոխումների առաջին քայլը դարձավ ՀՀ կառավարության 2022 թ. սեպտեմբերի 16-ի N 1429-Ն որոշումը՝ պարարվեստի ոլորտում գործող 3 պետական համույթները մեկ միասնական կազմակերպության՝ Ժողովրդական երաժշտության

և պարի ազգային կենտրոնի մեջ միավորելու վերաբերյալ: Հաջորդ քայլը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիայի 3 կոլեկտիվները նորաստեղծ կառույցի կազմում ընդգրկելու գործընթացն է:

Կերպարվեստի ոլորտ

152. Կարևորվում են ժամանակակից հայ կերպարվեստի զարգացումը և հայ նկարիչների ստեղծագործությունների հանրահռչակումը: Վերջին տարիներին այդ սկզբունքը կիրառվում է ոչ միայն հեղինակավոր միջազգային Expo-ներում, արվեստի բիենալեներում (հատկապես՝ Վենետիկի բիենալե) և պլեներներում հայ ժամանակակից արվեստի ներկայացմամբ, այլև մշակութային արդյունքի ստեղծման և ոլորտի ծառայությունների մատուցման մրցակցային դաշտի ձևավորմամբ, արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսմամբ, անհատ ստեղծագործողների արժևորմամբ:

153. Ոլորտի առաջնահերթություններից է ինստիտուցիոնալ հարաբերությունների ձևավորման և վարման քաղաքականությունը, մասնավորապես՝ Հայաստանի նկարիչների միության հետ համակարգված աշխատանքների իրականացումը:

Գեղարվեստական կրթության ոլորտ

154. Հետևողականորեն շարունակվել է գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի կատարելագործումը, որը ենթադրում է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում, մշակութային կրթության դերի բարձրացում, ավագ սերնդի փորձի փոխանցման լիարժեք պայմանների ստեղծում: Այդ նպատակով պետության կողմից հատկացված բյուջետային ֆինանսավորմամբ ուսումնամեթոդական և գործնական աջակցություն է ցուցաբերվել հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների **10250** աշակերտի և **4100** ուսուցչի, հրատարակվել է **22** անուն ուսումնամեթոդական ձեռնարկ, ձեռք է բերվել **24** անուն **156** երաժշտական գործիք, **15** շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներ մասնակցել են շուրջ **60** հանրապետական և միջազգային նախագծերի:

155. *Մշակութային և ստեղծարար ոլորտի ռազմավարական նպատակին՝* **նորարար, ներկայանալի և մրցունակ հայ ժամանակակից արվեստ** *ունենալուն հասնելու համար սահմանվել է* ***6 հիմնական գերակայություն***

Գերակայություն 1. ***Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի և ֆինանսավորման նոր մոդելի ներդնում***

156. Նշյալ ռազմավարական գերակայությունը միտված է **21** թատերահամերգային պետական ոչ առևտրային կազմակերպություններում կառավարման ժամանակակից համակարգերի ներդրմանը, որը ենթադրում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների օպտիմալացում, ֆինանսական միջոցների և մասնագիտական ռեսուրսների կենտրոնացում, մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրի և իրավական ակտերի մշակում, կազմակերպությունների գործունեության արդյունավետության որակական և քանակական չափորոշիչների մշակում, կառույցների գործունեության արդյունքներից կախված ֆինանսավորման մեխանիզմների մշակում և նոր մոդելի ներդնում, փաստահենք կառավարման համակարգի ամրապնդում:

Նպատակները՝

1. Ներդնել կառավարման արդի համակարգերի մոդելներ, սահմանել կազմակերպությունների գործունեության արդյունավետության որակական և քանակական նոր չափորոշիչներ՝ տարեկան **20** ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրերի լրամշակմամբ:
2. Ստեղծել պետական միջոցների նպատակային կառավարման նոր մեխանիզմներ:
3. Ներդնել Մասնավոր-Պետություն փոխշահավետ համագործակցության մոդել:
4. Ներդնել թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդել:
5. Ձևավորել Մշակույթի մեկենասության ինստիտուտը:

Իրականացվող քայլերը՝

1. Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի և սեգմենտացիայի իրականացում, պրոդյուսերների և տնօրենների աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացում[8],

2. Թատերահամերգային կազմակերպությունների թիրախավորման և դիրքավորման գործընթացի ապահովում: Կազմակերպվել է **4** դասընթաց **20** ՊՈԱԿ-ի աշխատակիցների մասնակցությամբ: Մշակվել են **12** ՊՈԱԿ-ի ռազմավարական ծրագրեր:

3. Ոլորտի կազմակերպությունների մարդկային ռեսուրսների և կարողությունների կատարելագործման նպատակով «Կառավարման կարողությունների

[8] Վերապատրաստման դասընթացները անց են կացվել հետևյալ ուղղություններով՝ ռամավարական կառավարում, ինստիտուցիոնալ մարքեթինգ և ծրագրային մարքեթինգ:

զարգացում» դասընթացների իրականացում՝ ՊՈԱԿ-ների տարեկան **30** աշխատակցի մասնագիտական կարողությունների զարգացում[9]:

4. Մշակութային հաստատություններում ֆոնդահայթայթման կարողությունների և մեխանիզմների զարգացման նպատակով՝ «Մշակութային ֆոնդահայթայթում» դասընթացների իրականացում: Ֆոնդահայթայթման գործնական ուղեցույցի մշակում:

5. Ստեղծագործական բուհերի «Արվեստի կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների փորձառության ձեռքբերում պետական կառույցներում՝ յուրաքանչյուր տարի **8** դասընթաց՝ **51** շահառուի համար, որից **30-35-ը՝** ուսանողներ:

6. Մինչև 2027 թվականը՝ փուլային տարբերակով թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդնում: Պիլոտային տարբերակով, մոդելը կկիրարկվի 2023 թվականին Ալ. Սպենդիարյանի անվանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Պետական միջոցների նպատակային կառավարում:
2. Ռազմավարական մտածողության ունակությունների զարգացում
3. Պրոդյուսերների և տնօրենների գործնական որակների բարձրացում:
4. Մասնավոր և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության հաստատում:
5. Ֆինանսավորման նոր մոդելի ներդնում
6. Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում

Գերակայություն 2. ***Թատերահամերգային կազմակերպություններում նյութատեխնիկական բազայի արդիականացում***

157. Գերակայությունը նպատակաուղղված է թատերական կազմակերպությունների գեղարվեստական կահավորման և բեմական հանդերձանքի ապահովմանը, մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավմանը, գեղարվեստական բարձրարժեք արդյունքի (գույքի) ապահովմանը: ՀՀ 2019-2022 թվականների պետական բյուջեի հատկացումների շնորհիվ հիմնանորոգվել են թատերահամերգային շինությունները[10]: 2022 թվականի

[9] Դասընթացների տևողությունը 3 շաբաթ է և ներառում է SWOT վերլուծություն, ռազմավարական ծրագրի մշակման քայլ առ քայլ ուղեցույց:

[10] Այդ աշխատանքների շնորհիվ, ի թիվս յալ մշակութային հաստատությունների նորոգվել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տանիքն ու կաթսայատունը, Գ. Սունդուկյանի թատրոնի մասնակի

ընթացքում կապիտալ միջոցների հատկացման շնորհիվ հնարավոր է դարձել հիմնովին վերազինել մի շարք թատերահամերգային կազմակերպությունների լուսաձայնային տեխնիկան, երաժշտական գործիքները, բեմական հանդերձանքը և այլն[11]:

Նպատակները՝

1. հիմնանորոգված թատերահամերգային շինություններ՝ նշյալ ոլորտում գործող կազմակերպությունների **50%-ը**,
2. Արդիականացված մշակութային ենթակառուցվածքներ՝ **80 %** տեխնիկապես վերազինված մշակութային հաստատություններ,
3. Մատուցվող որակյալ մշակութային ծառայություններ,
4. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ամբողջովին հարմարեցված և մատչելի թատերահամերգային հաստատություններ,

Իրականացվող քայլերը՝

1. Թատերահամերգային կազմակերպությունների շենքերի հիմնանորոգման /համաշինարարական աշխատանքներ, հարակից և շրջակա տարածքների բարեկարգում, թեքահարթակների կառուցում: Յուրաքանչյուր տարի առնվազն 2 թատերահամերգային կազմակերպություն:
2. Թատերահամերգային կազմակերպությունների համար մասնագիտական գույքի (լուսաձայնային տեխնիկա, երաժշտական գործիքներ, բեմական հանդերձանք և այլն) ձեռքբերում: Յուրաքանչյուր տարի առնվազն 3 հաստատություն:
3. Մշակութային հաստատությունների ջեռուցման և հովացման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Մշակութային ենթակառուցվածքների արդիականացում **50%,**
2. Մշակութային ծառայությունների որակի բարելավում **80%,**

վերանորոգման աշխատանքները, Երգի պետական թատրոնի վերանորոգման աշխատանքները, ընթանում են Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի և Մնջախաղի թատրոնի կառուցման աշխատանքները և այլ:

[11] Լուսաձայնային տեխնիկա, բեմական հանդերձանք, երաժշտական գործիքներ կստանան Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական թատրոնը, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնը և Մնջախաղի թատրոնը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Արտաշատի, Գյումրու, Վանաձորի և Գորիսի պետական թատրոնները, հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, Հայաստանի էստրադային ջազ նվագախումբը, Հայաստանի պետական ֆիլհարմոնիան, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, Հովի. Թումանյանի անվան Երևանի պետական տիկնիկային թատրոնը և այլն:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային հաստատությունների մատչելիության ապահովում **80%:**

Գերակայություն 3. ***Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների գործունեության խթանում***

158. Այս գերակայության հիմքում ընկած է ստեղծարար, տաղանդավոր անհատ արվեստագետների համար բարենպաստ միջավայրի ձևավորման սկզբունքը, որին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է հասնել ոլորտային նպատակային ծրագրերի (***Արվեստների ծրագիր, Կինեմատոգրաֆիայի ծրագիր***) իրականացման, ինչպես նաև անկախ արվեստագետների և դաշտում գործող մշակութային կազմակերպությունների ստեղծագործական նախագծերին (երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ, թատերական ներկայացումներ, հյուրախաղային գործունեություն, արվեստի բիենալեներ, ցուցահանդեսներ և այլն) աջակցության միջոցով[12]:

Նշյալ ռազմավարության նպատակը ինքնազբաղ/անկախ արվեստագետների ինստիտուցիոնալացումն է:

Նպատակները՝

1. Մշակել պետական կառույցի և ինքնազբաղ ստեղծագործողների/ արվեստագետների համագործակցության մեխանիզմներ:
2. Ձևավորել ստեղծարար բարենպաստ միջավայր տաղանդավոր անհատ արվեստագետների և մրցունակ արվեստային արդյունքի ստեղծման համար:
3. Ապահովել պետական միջոցների բաշխման թափանցիկությունը:
4. Կատարելագործել դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգը:

Իրականացվող քայլերը՝

1. Ոլորտում անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների իրականացում, ներառյալ հեղինակային իրավունքների պաշտպանության ուղղությամբ (հայեցակարգեր, չափորոշիչներ և այլն)՝ միջազգային փորձի համադրմամբ:
2. Նպատակային ծրագրերի իրականացում: Տարեկան **500** համերգային ծրագիր, **15** հոբելյանական միջոցառում, **8** փառատոն, **30** նոր ներկայացում, **2** *խաղարկային, **2** անիմացիոն, **2** փաստավավերագրական ֆիլմերի նկարահանում, **4***

[12] Ինքնազբաղ արվեստագետները ակտիվորեն ներգրավված են կրթամշակութային նախագծերում՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի և Հովի. Թումանյանի անվան Երևանի պետական տիկնիկային թատրոնների նախագծերում: Զգալիորեն ավելացել է ինքնազբաղ արվեստագետների մասնակցության քանակը արտերկրում իրականացվող ստեղծագործական նախագծերին:

հոբելյանական միջոցառումների իրականացում, որոնցում ընդգրկվում են ինքնազբաղ ստեղծագործողներ:

3. *Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն* դրամաշնորհների միջոցով՝ մշակութային ուղղվածության կազմակերպությունների և ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների համար: Տարեկան մինչև 8**0** արվեստագետ և **40** ծրագիր:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Ստեղծագործական ինքնարտահայտման համար բարենպաստ միջավայրի և մրցակցային դաշտի ապահովում:

2. Նորարարական մտահղացումների խթանում:

3. Ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում: Մասնագիտական հովանոցային ասոցիացիաների ստեղծման պայմանների ձևավորում, որոնք կմիավորեն հայ արվեստագետներին և ստեղծագործական միությունները [13]:

4. Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների իրավական, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և հարաբերությունների հստակեցում: Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտում:

5. Մշակութային դաշտում նոր անունների բացահայտում և վերհանում:

6. Երիտասարդ ստեղծագործողների ինտեգրում միջազգային մշակութային գործընթացներին:

7. Մշակութային քաղաքականության համաչափության ապահովում:

Գերակայություն 4. ***Գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի կատարելագործում***

159. Կրթության և մշակույթի համադրումը պետական մշակութային քաղաքականության առաջնահերթություններից է: Մշակութային և ստեղծարար ոլորտների որակն ու պահանջարկն ուղղակիորեն կախված են ընկալող միջավայրի (հանդիսատես, ունկնդիր) կրթության և իմացության աստիճանից:

Գերակայությունը նպատակաուղղված է գեղարվեստական կրթության որակի և գեղագիտական դաստիարակության մատչելիության ապահովմանը, մշակույթի

[13] *Առաջարկությունը հիմնված է ՀԲԸՄ «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի կողմից իրականացված Հայաստանի ստեղծարար ոլորտի կարիքների հետազոտության արդյունքների վրա: Ծրագիրը ֆինանսավորվել է ԵՄ կողմից: Համապատասխան միության հիմնադրումը նախատեսվում է իրականացնել համատեղ ՀԲԸՄ «Կատապուլտ» ծրագրի և շվեդական «ԱրտՆեքսուս» ծրագրի համագործակցության շրջանակում:*

ոլորտի կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը, մասնագետների կրթության շարունակականության ապահովմանը, ատեստավորման գործընթացի գործարկում, մշակութային-կրթական ծառայությունների որակի բարձրացմանը, Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող արժեքահենք և մշակութահենք նպատակային ծրագրերի իրականացմանը: Այն ենթադրում է մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում, հասարակության բոլոր սոցիալական շերտերի և տարիքային խմբերի, հատկապես՝ երեխաների և պատանիների մշակութային կրթության դերի բարձրացում, ավագ սերնդի փորձի փոխանցման լիարժեք պայմանների ստեղծում, ոչ ֆորմալ կրթության ապահովում:

Նպատակները՝

1. Ընդլայնել գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության համակարգը,
2. Նպաստել մշակույթի ոլորտում մասնագիտական կրթության շարունակականության ապահովումը՝ այն համադրելով հանրակրթական ծրագրերի հետ՝ ստեղծելով յուրաքանչյուր մարզում մեկական մասնագիտացված դպրոց,
3. Ներդնել դասավանդման նոր մեթոդներ,
4. Գործադրել մանկավարժական աշխատողների ատեստավորման մոդելը,
5. Ուսուցման որակը բարձրացնել **40 %,** մատչելիությունը՝ **70 %,**
6. Խթանել ներառականությունը,
7. Ստեղծել շնորհալի երեխաների շտեմարան,
8. Համալրել երաժշտական գործիքների հավաքածուն:

Իրականացվող քայլերը՝

1. Կրթության ու մշակույթի կապը խթանող ծրագրերի իրականացում:
2. Շնորհալի երեխաների ցանկերի կազմում և համալրում
3. Շնորհալի երեխաների ունակությունների շարունակական բացահայտում ու զարգացում:
4. Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում
5. Գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացում
6. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում
7. Ազգային, փողային և լարային գործիքների ձեռքբերում

8. Կրթամշակութային ծրագրերի իրականացում[14]
9. Ներառական փառատոների կազմակերպում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Զարգացման առանձնահատկություններ և հաշմանդամություն ունեցող երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտում և զարգացում:

2. Գեղարվեստական կրթության որակի և գեղագիտական դաստիարակության մատչելիության և շարունակականության ապահովում:

3. Նպաստել մշակույթի ոլորտում մասնագիտական կրթության շարունակականության ապահովումը՝ այն համադրելով հանրակրթական ծրագրերի հետ՝ ստեղծելով յուրաքանչյուր մարզում մեկական մասնագիտացված դպրոց:

4. Ոլորտում դասավանդող մանկավարժական աշխատողների կենսամակարդակի բարձրացում:

5. Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում անցնող երեխաների քանակի ավելացում **30%**

6. Երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտներին երաժշտական գործիքներով ապահովում **50%**

7. Բարեկիրթ և գիտակ քաղաքացու ձևավորում:

160. 2022 թվականին իրականացվել է **26** նպատակային ծրագիր, այդ թվում՝

1. «**Մեկնարկ**» տաղանդի զարգացման նպատակային ծրագիր

Ծրագրում ընդգրկված են 11-20 տարեկան 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարող, որոնք հնարավորություն ունեն կատարելագործելու իրենց հմտությունները կատարողական արվեստի բնագավառում: Ծրագրի անդամները շուրջ 32 վարպետության դասեր են ստացել աշխարհի լավագույն մասնագետներից: 2022 թվականին ծրագրի անդամները մասնակցել են 18 երաժշտական միջազգային մրցույթների, արժանանալով 1-ին և 2-րդ մրցանակներին:

2. «**Դասարան + Դասական**» ստեղծագործական կրթական ծրագիր նախատեսված է հանրապետության ավագ դպրոցների ու միջին մասնագիտական հաստատությունների սովորողների համար և միտված է ամրապնդելու դպրոց-թատրոն կապը: 2022 թվականին ծրագրի շահառուների թիվը 2021 թվականի համեմատ ավելացել է 11%-ով:

3. «Քո արվեստը դպրոցում» ծրագիրը միտված է երեխաների մասնագիտական կողմնորոշմանը, հոգևոր զարգացմանը, արվեստի ճյուղերի ճանաչմանն ու հայ արվեստագետների հանրային ճանաչելիության բարձրացմանը: 2022 թվականին

[14] «Դասարան+դասական», «Կինոն՝ ուսուցիչ», «Մեկնարկ», «Զարդագիր», «Քո սերնդակիցը», «ԴասԱրվեստ», և այլն

ծրագրի շրջանակներում իրականացվել է 50 միջոցառում՝ 21 Երևանում, 29 ՀՀ մարզերում, որին մասնակցել է 50 արվեստագետ, 4887 աշակերտ, 525 դպրոց:

4. «**Իմ սիմֆոնիկ»** երիտասարդական կրթամշակութային ծրագիրը մեկնարկել է 2022 թվականին և միտված է մշակութային պահանջարկի ձևավորմանը: Ծրագրի մասնակից են դարձել հայաստանյան 8 համալսարանի 2180 ուսանող:

5. Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցությանը միտված **«Քույր-դպրոցներ»** ծրագիրը մշակութային կրթության ոլորտի շարունակական զարգացման, Երևան-մարզ համատեղ ստեղծագործական աշխատանքի, գործնական հմտությունների ձեռքբերման, փորձի փոխանակման հարթակների ձևավորման ու դրանց գործունեության միջոցով ոլորտի համաչափ, ներդաշնակ զարգացման ապահովմանն ուղղված ծրագիր է: 2022 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է 24 միջոցառում՝ 12 Երևանում, 12 ՀՀ մարզերում, որին մասնակցել է 420 աշակերտ և 80 մանկավարժ 60 դպրոցից:

6. «**Խոսող կտավներ**» ներառական նախագծի շրջանակում ստեղծվել են Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի **5** գլուխգործոցի շոշափելի պատճենները: 2023 թ. ծրագիրն իրականացվել է Մ. Սարյանի տուն-թանգարանի հետ համատեղ: Ծրագրի շրջանակում ստեղծվել են Սարյանի 6 գլուխգործոցի՝ Պաննո «Հայաստան» (1964), Արագած (1925), Կոստանդնուպոլսի շները (1910), VII դարի Կարմրավոր եկեղեցին. Աշտարակ (1956), Դեպի աղբյուր (1928), Երևանյան բակը գարնանը (1928) շոշափելի կրկնօրինակները:

7. «**Կինոդպրոց առանց սահմանների**» կրթական ծրագիր՝ ՀՀ Ազգային հերոս Վահագն Ասատրյանի անվան Հերոսների վերականգնողական քաղաքում» ծրագիրը Հայաստանում առաջին անվճար կինոդպրոցն է:

8. «**Կողք-կողքի**» ներառական երաժշտական արտ միջազգային փառատոն: 2022 թվականին փառատոնին մասնակցեցին շուրջ 200 պատանի, դեռահաս հաշմանդամություն ունեցող անձինք և անվանի երաժիշտներ:

Գերակայություն 5. ***Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին***

161. Գերակայությունը ենթադրում է Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի, ցուցահանդեսների իրականացում, հայկական մշակույթի և ժամանակակից արվեստների զարգացում և տարածում, մարդկանց հոգևոր պահանջմունքների բավարարում:

162. Իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն ազգային և միջազգային գեղարվեստական փոխակերպումների հենքի վրա ժամանակակից արվեստի ոլորտների (թատերարվեստ, երաժշտարվեստ, կերպարվեստ, պարարվեստ) զարգացմանը և հանրահռչակմանը, ստեղծագործական և գեղարվեստական բարձր նշաձողի պահպանմամբ և հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին

համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը

163. Ազգային տոների, ավանդույթների, ժողովրդական երաժշտությանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգության ցանկերում ընդգրկված ազգային նվագարանների և պարի հանրահռչակմանն ուղղված միջազգային փառատոների կազմակերպմանը Հայաստանի մարզերում՝ համայնքային (ներառյալ ազգային փոքրամասնությունների) ստեղծագործական ներուժի ներգրավվմամբ և հասարակության լայն շերտերի՝ այդ թվում ներառական խնդիրներ ունեցող անձանց մասնակցությամբ:

Նպատակները՝

1. Միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ հայ մշակույթ:
2. Ձևավորել Հայաստանի՝ որպես արդի գեղարվեստական պրոցեսների մասնակից, ընդհանուր քաղաքակրթական արժեքները պահպանող և տարածող երկրի բարձր վարկանիշը:
3. Ընդգրկել միջազգային գեղարվեստական փոխակերպումներում:

Իրականացվող քայլերը՝

1. Միջմշակութային կապերը խթանող նախագծերի իրականացում՝ համատեղ նախաձեռնության սկզբունքով:
2. Հայաստանյան կոլեկտիվների, ստեղծագործական խմբերի, անհատ արվեստագետների մասնակցություն արտերկրի միջազգային փառատոներին:
3. Թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղային գործունեության աջակցում՝ հայ մշակույթի հանրահռչակման նպատակով: Տարեկան **50** հյուրախաղ Հայաստանում և **30** հյուրախաղ՝ արտերկրում:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Ազգային և միջազգային մակարդակներում հայ ժամանակակից արվեստի ոլորտների հանրայնացում:
2. Միջազգային գեղարվեստական շուկայում ընդգրկվածության ապահովում:
3. Հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցում:
4. Ոլորտային մրցանակների հիմնում:

Գերակայություն 6. ***Համայնքներում մշակույթի համաչափ զարգացման ապահովում***՝

164. Գերակայության հիմնանպատակը մշակութային կյանքի ապակենտրոնացումն է, մարզերում մշակութային գործունեությամբ զբաղվելու կարողությունների զարգացումը, մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացումը, համայնքային մշակույթի և մշակութային ժամանցի կազմակերպումը (ներառյալ՝ մշակութային հաստատությունների հիմնանորոգումն ու արդիականացումը), միջմարզային կապերի զարգացումը, մշակութային ծառայությունների որակի բարձրացումը, մարզային փառատոների անցկացումը՝ մասնավորապես Հեղինակային երգի փառատոներ Սևանում և Ջերմուկում, Ջարկ Ֆեստ փառատոնի անցկացում Դաշտադեմում, կինոփառատոնի անցկացում Ուջանում:

Նպատակները՝

1. Ապակենտրոնացնել մշակութային քաղաքականություն
2. Աշխուժացնել մարզերի մշակութային կյանքը
3. Ակտիվացնել միջմարզային կապերը
4. Բարձրացնել մարզերում մշակութային ծառայությունների մատուցվող որակը:
5. Հիմնանորոգել համայնքային ենթակայության մշակութային հաստատությունները:

Իրականացվող քայլերը՝

1. Մարզերում նպատակային ծրագրերի կազմակերպում և իրականացում:

2. Մարզային հասարակական և մշակութային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի աջակցում:

3. Համայնքային բնակչության ընդգրկում մշակութային նախագծերի իրականացմանը:

4. Երևանի և մարզերի կրթամշակութային հաստատությունների միջև կրթական ծրագրերի իրականացում:

5. Բարձր վարկանիշ ունեցող փառատոների ստեղծում՝ ըստ համայնքների առանձնահատկությունների:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. Մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովում, մշակութային արդյունքի և նոր աշխատատեղերի ստեղծում, միասնական մշակութային դաշտի ձևավորում

2. Մարզերում մշակութային զբոսաշրջության խթանում՝ արտագնա թատերահամերգային հյուրախաղերի, փառատոների, թատերական և համերգաշրջանների բացման ձևաչափով

3. Միջմարզային ստեղծագործական կապերի զարգացում, մարզերում ստեղծարար մտքի զարգացում,

4. Համայնքներում մասնագիտական կարողությունների զարգացում, ստեղծարար և նորարարական կենտրոնների ու լաբորատորիաների հիմնում,

5. Համայնքներում դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում:

6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Օրենսդրական և այլ իրավական ակտերի մշակում և հաստատում:

2. Ազգային մակարդակում սույն ռազմավարության ներդրման ռազմավարական ուղղություններին համապատասխան իրականացվող գործողությունների համակարգում:

3. Ուղեցույցների և կրթական այլ նյութերի մշակման գործընթացի կազմակերպում:

4. Տարբեր ոլորտների մասնագետների վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

5. Տեղեկատվական նյութերի մշակում և հրատարակում:

6. Ոլորտի հիմնախնդիրների ուսումնասիրմանն ուղղված հետազոտությունների իրականացում:

7. Սույն ռազմավարության շրջանակում իրականացվող ծրագրերի ներդրման և մշտադիտարկման գործընթացի կառավարում:

8. Մարզային մակարդակում մասնակցություն սույն ռազմավարության ներդրմանն ուղղված միջոցառումների կատարման գործընթացին:

7. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

1. Ռազմավարության և գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման ընթացքում հնարավոր են հետևյալ ռիսկերը՝

ա) Միջոցառումների իրականացմանը խոչընդոտող ֆինանսական միջոցների բացակայություն/ոչ բավարար միջոցների տրամադրում:

բ) Լրացուցիչ/չպլանավորված աշխատանքների կատարման անհրաժեշտության առաջացման ռիսկեր:

գ) Ռազմավարության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի գործողությունների ժամկետների երկարաձգումներ՝ պայմանավորված լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու հանգամանքով:

դ) Ռազմավարության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի ճշտումներ ու ժամկետների փոփոխություններ՝ պայմանավորված աշխատանքների իրականացման առանձնահատկություններով:

ե) Կազմակերպական մարտահրավերներ:

զ) Ներգրավված կառույցների ու շրջանակների ոչ բավարար համագործակցություն, տեղեկատվական փոխանակման ու վերահսկման գործուն մեխանիզմի ոչ բավարար կիրառում:

2. Ռիսկերի նվազեցման նպատակով՝

ա) Կիրականացվեն կարողությունների գնահատման ու իրազեկման աշխատանքներ:

բ) Յուրաքանչյուր գործողության համար պատասխանատու մարմինը պետք է գործողության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատման հիման վրա ապահովի ֆինանսական միջոցների հատկացման նախատեսումն իր կողմից ներկայացվող բյուջետային հայտում, միջնաժամկետ ծախսերի ծրագրում կամ այլ աղբյուրներից:

գ) Գործողությունների իրականացման ընթացքում չպլանավորված աշխատանքների իրականացման անհրաժեշտության առաջացման դեպքում ձեռնարկել լրացուցիչ աշխատանքների ծավալի և պահանջվող ֆինանսավորման (առկայության դեպքում) գնահատում:

դ) Միջոցներ ձեռնարկել մարմինների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների միջև՝ գործողությունների իրականացման վերաբերյալ տվյալների փոխանակման համար:

ե) Իրենց լիազորությունների շրջանակում աջակցել պատասխանատու մարմինների գործողությունների իրականացմանը:

8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

1. Փոփոխության տեսություն

165. Փոփոխության տեսությունը (ՓՏ) հաջողված փորձի մեթոդաբանություն է իրականացվող միջամտությունների (քաղաքականություն, ռազմավարություն, ծրագիր կամ նախագիծ) պլանավորման և գնահատման համար, հատկապես այնպիսիների, որոնք ուղղված են հասարակությունում փոփոխությունների խթանմանը կամ կենսագործմանը: Մեթոդաբանությունը շեշտը դնում է նպատակային փոփոխություն(ներ)ի կամ օգուտ(ներ)ի վրա, որոնք վերջնարդյունքում անհրաժեշտ է իրականացնել, այնուհետև դրանք քարտեզագրում է հակառակ հաջորդականությամբ՝ վերհանելու համար պատճառահետևանքային կապ ունեցող մի շարք նախապայմաններ, որոնք կպահանջվեն դրանց կենսագործման համար՝ հետևյալ կերպ.

1. **Ներազդեցություններ** – հասարակության համար ընդհանրական, վերջնական փոփոխությունները կամ օգուտները, որոնց իրագործմանը միտված է միջամտությունը: Դրանք կարող են արտահայտվել կամ ամրապնդվել գալիք իրավիճակի այնպիսի «տեսլականով» ապագայի որևէ կտրվածքով, երբ նախատեսվող փոփոխությունները մտել են ուժի մեջ (կամ սկսել են գործել) և նախատեսում են օգուտների կենսագործում,
2. **Վերջնարդյունքներ** - հատուկ փոփոխություններ կամ օգուտներ (անհատների, կազմակերպությունների կամ շահագրգիռ կողմերի խմբերի համար), որոնք պահանջվում են ցանկալի ազդեցությունների կենսագործման համար,
3. **Անմիջական արդյունքներ** – այնպիսի հստակ միջանկյալ արդյունքներ, որոնք պահանջվում են ծրագրի գործողությունների շնորհիվ հասնելիք հետևանքների ապահովման համար,
4. **Գործողություններ** – այն հատուկ քայլերը, որոնք պահանջվում են կատարված ներդրումների շնորհիվ նախատեսված արդյունքներին հասնելու համար,
5. **Ներդրումներ** - նախատեսված գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները:

Փոփոխության տեսության մեջ հարկ է հատկանշել և հաշվի առնել հետևյալ գործոնները ևս.

Նպաստող գործոններ - արտաքին միջավայրի պայմաններ, որոնք կարող են օգնել հասնելու նախագծի նախատեսված օգուտներին,

Ռիսկեր - արտաքին միջավայրի պայմաններ, որոնք կարող են բացասաբար ազդել նախագծի նախատեսված օգուտների ձեռքբերման վրա:

166. Այս մեթոդաբանության գլխավոր նպատակը միջամտության հիմքում ընկած այն տրամաբանական զարգացումների ձևակերպումն է, թե ինչպես են նախատեսվող ներդնումները և գործողությունները հանգեցնում շահագրգիռ կողմերի համար օգուտների (արդյունքներ և ներազդեցություն) ստացմանը: Սա կարելի է արտահայտել գծապատկերի տեսքով, որը կօգնի ակներև կերպով նշել պատճառահետևանքային կապերը և ժամանակագրությունը: Այս աղյուսակը երբեմն անվանում են նաև «Արդյունքների ուղի» կամ «Տրամաբանական զարգացման մոդել»:

167. Միջամտության իրականացման համար կազմվող **Տրամաբանական զարգացման մոդելը** թեկուզև մասնակիորեն ամենասկզբում հիմնված կլինի տեսական պատկերացումների և ենթադրությունների վրա: Երբ միջամտությունը սկսում է իրականացվել, մշտադիտարկվել և գնահատվել, հետզհետե հասանելի են դառնում փաստացի արդյունքների և ազդեցությունների վերաբերյալ տվյալներն ու ապացույցները (դրական և բացասական, նախատեսված և չկանխատեսված), որոնք կարող են օգնել տեսության հաստատմանը, հերքմանը կամ փոփոխմանը: Այս ռազմավարության բարձր աստիճանի տրամաբանական մոդելը պատկերված է նկար 1-ում:

2. Մշտադիտարկում

168. Կստեղծվեն վերահսկողության և կառավարման համապատասխան մեխանիզմներ՝ ռազմավարական ծրագրի կատարումը մինչև վերջ մշտադիտարկելու համար: Ըստ նպատակահարմարության՝ կարելի է նաև ստեղծել անհատական միջամտությունների հատուկ շրջանակներ (օրինակ՝ նախագծի խորհուրդ, պլաններ, գնահատումներ), երբ դրանք ունեն զգալի մասշտաբներ և բարդություն (օրինակ՝ խոշոր ենթակառուցվածքային նախագծեր): Ռազմավարության մշտադիտարկումը և գնահատումը, ընդհանուր առմամբ, կարող են բաժանվել երկու տարրերի.

1. **Իրականացում** – որքանով է Ռազմավարությունը կարողացել ապահովել նախատեսված *գործողություններն* ու *արդյունքները*՝ ըստ նախատեսված ժամկետների, ներդրված ռեսուրսների և որակի չափանիշների:
2. **Ներազդեցություն** – որքանով է Ռազմավարությունը հանգեցրել նախատեսված օգուտներին (*վերջնարդյունքներ* և *ներազդեցություն*)՝ ինչպես առանցքային շահագրգիռ կողմերի, այնպես էլ, առհասարակ, հանրության համար:

3. Օգուտների կենսագործման շրջանակ

169. Եթե Ռազմավարության հիմքում առկա տեսությունը ճիշտ է, ապա ակնկալվող արդյունքները (*վերջնարդյունքները* և *ներազդեցությունը*) պետք է տրամաբանորեն ենթադրվեն Ռազմավարության արդյունավետ իրագործումից: Այդուհանդերձ, քանի որ տեսությունը կախման մեջ է բազմաթիվ ենթադրություններից և փոփոխականներից, որոնց թվում՝ նպաստող գործոնների առկայությունը և ռիսկերի բարեհաջող նվազեցումը, կարևոր է ձեռնարկել դրա ազդեցության մշտադիտարկման և գնահատման միջոցներ:

170. Անհրաժեշտ կլինի մշակել օգուտների կենսագործման շրջանակ՝ համաձայն տեսությանը, ինչպես նաև պարզել.

1. Նախատեսված **օգուտները** և դրանց առաջնային **օգտատերերին**.
2. Օգուտների առարկայացման ակնկալվող ժամկետները: Սա չի ենթադրում հստակ ժամկետներ, այլ ավելի շուտ վերաբերում է օգուտների հարաբերական փոխակերպմանը արդյունքների՝ հետևյալ կերպ.

ա) Անմիջական արդյունքները տեղի են ունենում գործունեության և արդյունքների իրականացմանն ամենամոտ ժամանակում՝ միաժամանակ կամ կարճ ժամանակ անց (օրինակ՝ գիտելիքների և հմտությունների ավելացումը՝ որպես վերապատրաստման անմիջական արդյունք, մշակութային տարածքի որակի բարելավումը կամ մատչելիությունը՝ որպես կապիտալ ներդրման անմիջական արդյունք),

բ) Ակնկալվում է, որ **միջանկյալ արդյունքները** հետևեն անմիջական արդյունքներին՝ սովորաբար մի քանի ամիսների կամ մի քանի տարվա ընթացքում (օրինակ՝ կազմակերպչական գործունեության բարելավումը՝ որպես գիտելիքների և հմտությունների բազմապատկման արդյունք, հանդիսատեսի բարելավված փորձառությունը՝ որպես մշակութային տարածքի բարելավման կամ պլանավորման արդյունք):

171. **Երկարաժամկետ արդյունքները** կամ **ներազդեցությունները** այն դրական փոփոխություններն են, որոնք ռազմավարությունը կոչված է իրականացնելու, և հետևաբար, դրանք իրականություն են դառնում ամենավերջին հերթին: Դրանց թվում կարող են լինել տնտեսական գործունեության կամ հանրային առողջության և բարեկեցության աճը տարածաշրջանային կամ պետական մակարդակում:

172. Օգուտների ստացման մասին առաջարկվող **ցուցիչներ** (այդ թվում՝ պատկերացումները, տվյալները և ապացույցները) (օրինակ՝ լսարանի քանակը՝ որպես ներգրավվածության ավելացման ցուցանիշ): Որոշ դեպքերում կարող են պահանջվել մի շարք այլ հաշվարկային տվյալներ:

173. Օգուտների ցուցանիշների ստացման և գնահատման առաջարկվող մեթոդաբանությունը ներառում է սկսած անհատների անմիջական արդյունքներին վերաբերող համեմատաբար պարզ վարժություններից (օրինակ՝ հարցումներ լսարանի

շրջանում, անձնակազմի գնահատում) մինչև ավելի բարդ վարժությունների գնահատում՝ կուտակային երկարաժամկետ ազդեցությունները պետական կամ ոլորտային մակարդակում:

174. COVID-19 համավարակի պատճառած սոցիալական և տնտեսական խոշոր խաթարումը առանձնահատուկ մարտահրավեր է էական նշանակություն ունեցող ելակետային տվյալների և թիրախների սահմանման հարցում: Դրանց շարքում են.

1. Մշակութային և ստեղծարար ոլորտների աճի միտումները. երբ դրանք ակներև և կտրուկ ընդհատվել են, ինչը նշանակում է, որ նախկին ցուցանիշները բարելավելու ձգտումը այլևս իրատեսական հավակնություն չէ, համենայն դեպս՝ կարճաժամկետ հեռանկարում, հաշվի առնելով համավարակի և Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի թողած խոր ազդեցությունը և դրա դեմ ձեռնարկված միջոցառումները, ինչից հետևում է, որ դրանք մեծ արժեք չեն ներկայացնում որպես հիմք՝ ապագա կատարողականության պատկերը համեմատելու համար:
2. Ապագայի միտումները դժվար կանխատեսելի են ինչպես տնտեսական գործունեության, այնպես էլ մշակութային վարքաբանության տեսանկյունից: Այդ պատճառով, չնայած դրա ավելի նպատակահարմար լինելուն, ավելի դժվար է դառնում գտնելը ռազմավարական միջամտությունների ազդեցության հուսալի այլընտրանքային չափումներ՝ դրանք կիրառելու համար իրարամերժ սցենարի (ինչ հետագա սպասելիքներ կարող են լինել ռազմավարության բացակայության դեպքում) և ոչ պատմական տվյալների հետ համեմատելիս (փաստացի ինչ է տեղի ունեցել անցյալում):

175. Հետևաբար՝ ելակետային հուսալի տվյալների կամ կանխատեսումների բացակայության և ռազմավարական միջավայրում շարունակական փոփոխությունների ու անորոշության պայմաններում կարևոր է խնդիրները քննել երկարաժամկետ կտրվածքով և չշտապել քանակական թիրախներ սահմանելիս կամ ազդեցությունը չափելիս:

176. Կարճաժամկետ հեռանկարով (1-ին և 2-րդ տարում) գնահատումը պետք է ուշադրություն դարձնի արդյունավետ կենսագործումների և անհատների ու կազմակերպությունների ունեցած անմիջական արդյունքների, այլ ոչ ոլորտային կամ պետական մակարդակում վերջնարդյունքների վրա: Հավանաբար այդ ուշադրությունը հարկ կլինի սևեռել դիմակայելուն և վերականգնվելու ջանքերին:

177. Միջնաժամկետ հեռանկարով (2-րդից 5-րդ տարիներ), երբ արդեն ձևավորված լինի ռազմավարական միջավայրը և COVID-19-ի երկարաժամկետ ազդեցությունները դառնան ավելի հասկանալի, հնարավոր է, որ իմաստ ունենա ձեռնամուխ լինել հետագա քարտեզագրմանը և վերլուծական աշխատանքներին՝ նշանակալի

ելակետային տվյալների ֆիքսման և «իրարամերժ» կանխատեսումների ու զարգացման թիրախների մշակման համար: Կարող է նաև անհրաժեշտություն ծագել ճշգրտումների միջոցով վերանայելու ռազմավարությունը, որպեսզի այն շարունակի մնալ նպատակային:

178. Առավել երկարաժամկետ հեռանկարով (5-15-րդ տարիներ) կարող են անցկացվել պարբերական գնահատումներ՝ պարզելու համար ռազմավարության տնտեսական և ավելի ընդհանրական սոցիալական ազդեցությունները ելակետային և իրարամերժ սցենարների նկատմամբ՝ նպատակ ունենալով վերադառնալ կայուն աճի շրջափուլ:

9. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՍՈ	Մշակութային և ստեղծարար ոլորտներ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԿՑ	Հիմնական կատարողական ցուցիչ
ԿԳՄՍՆ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՔՏՍՏ	Քաղաքական/տնտեսական/սոցիալ-մշակութային/ տեխնոլոգիական
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՅՈՒՆԵՍԿՕ	ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն

10.ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի վերաբերյալ աղբյուրներ

Gargarian, A., Vahan, T., Aslanyan, A., Manasyan, H., Mkrtchyan, M. (2023). *Armenia's Cultural and Creative Industries Economic Development Needs Assesment: Research for AGBU's "Katapult" Creative Accelerator Program.*Unpublished

Recommendations for CCIs development in Armenia. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/21-recommendations-for-cci-in-am

Farinha, C. (2018). *Developing cultural and creative industries in Armenia*. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/creative-industries-study-for-armenia

Ghukasyan, A., Martirosyan, T., Balayan, G. (2017). Developing a digital tourism platform for Armenia (DTPA): A policy brief for Culture & Creativity EU-Eastern Partnership Programme. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/policy-brief-2

Grigoryan, A., Khalatyan, A., Mnatsakanyan, G., Ohanyan, M., Papoyan, S., Mlqe-Galstyan, S. (2017). *A new cultural policy for Armenia's Regions: a policy brief for Culture & Creativity EU-Eastern Partnership Programme. No.19*. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/policy-brief-19

Grigoryan, S. (2019). *How creative industries are supporting the economy in Armenia*. Creative Europe Armenia. Available at: https://issuu.com/sedagrigoryan/docs/culture_and_economy_-_armenia_-_sed

Manukyan, Q., Avanesyan, V., Mkrtchyan, L. (2017). Developing culture-educational partnership in the Marzes of Armenia: a policy brief for Culture & Creativity EU-Eastern Partnership Programme. No.9. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/policy-brief-9

Markosyan, A., Mkrtchyan, M., Meliksetyan, G., Bourgaut, N. (2017). *UNESCO culture for development indicators: Armenia's technical report. No.2*. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/cdis-armenia

Muradyan, T. and Zeitountsian, Z. (2020). *Perspectives on contemporary art management in public sector. Final narrative report*. Unpublished.

Pickard, R. (2017). *Report on increasing the competitiveness of the cultural heritage sector in Armenia*. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/how-to-increase-the-cultural-potential-of-armenia

Pravylo, O. (2017). *Creative towns and regions initiative: report for Sisian*. EU-Eastern Partnership Culture & Creativity Programme. Available at: https://www.culturepartnership.eu/en/article/report-sisan

Soghikyan, K. (2019). *Creative industries concept may boost Armenia economy and trigger economic development*. Unpublished.

2. ՄԹ վերաբերյալ աղբյուրներ

Arts Council England (2020). *Let's create. Strategy 2020-2030*.

Baily, A. (2019). *The art of peace: the value of culture in post-conflict recovery*. British Council. Available at: https://www.britishcouncil.org/research-policy-insight/insight-articles/art-of-peace

BOP Consulting (2017). *Evaluation of Catalyst Year 3. Full report*. Manchester: Arts Council England.

British Film Institute (2017). *BFI2022. Supporting UK Film. BFI plan 2017-2022*.

DCMS (2018). *Culture is digital*.

DCMS (2020). *DCMS sectors economic estimates 2018: Gross Value Added*.

DCMS (2020). *DCMS sectors economic estimates 2019: employment*.

HM Government (2017). *Industrial strategy: building a Britain fit for the future*.

HM Government (2018). *Industrial strategy: creative industries sector deal*.

HM Government (2020). *Our plan to rebuild – the UK Government's COVID-19 recovery strategy*.

Local Government Association (2020). *Creative places – supporting your local creative economy*.

National Lottery Heritage Fund (2019). *Strategic funding framework 2019-2024*.

The Warwick Commission (2015). *Enriching Britain: culture, creativity and growth*.

Wright, J. (2020). *Policy, funding and support for creative and cultural industries: insights from the UK. A report for British Council Armenia*. Unpublished.

Building on the 2021 International Year of Creative Economy for Sustainable Development through consolidated action. https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379182

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ